

636(075)

34-67

Հ ԼՈՒԱՎՈՐԻԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՕՄԻՍԱՐԻԱ
ՀՈԼԵԿԱՆ ԴԱՏԱԿՐԱՎՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՈՎՈՒԹՅՈՒՆ
ԶԵՄՆԱ ԱՐԵՆԱՐ Ա.Հ.Ա.ՏԱ.Ն.Ք. ԴՊՀԱՅ.

Խ. ՅԵՐԻՑՅԱՆ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ 9.

ΣΑΡΦΕΤΡΗΣ

ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՑԵՎ ԽՆԱՄԵԼՈՒ
ՌԱՑԻՈՆԱԼ ԶԵՎ ԵՐԸ

22 '1.1.0.604.



ՊԵՏՏԵՐԱԿԱՆ 1928 ՅԵՐԵՎԱՆ

11 APR 2013

24 SEP 2010

ՀԱՅԵՑ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՃՈՂՋՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ԱՊՅԱՆԱԿԱՆ ԴԱՏԻՄԱՎԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐՈՒԹՅՈՒՆ
ԶԵՐ-ՆԱՐԿԵՐ ԱՇԽ.Ա.ՑԱՆ.ՔԻ ԳՐԱՅՅԻ

636 (075) 44.

36-67

Խ. ՅԵՐԻՑՅԱՆ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ Գ.

1960
1961
1962
1963

S U C C E S S

ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՅԵՎ ԽՆԱՄԵԼՈՒ Ռ Ա Ց Ի Ա Ն Ա Լ Զ Ե Վ Ե Ր Ը

2 6 0 9 0 1

Գյուղյերիս յեվ գյուղատնտեսական դպրոցների, հորբարուծական յեվ գյուղատնտեսական խմբակների համար

22 TUBA

ԳԵՂԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՂԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
Երևան 1928

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հատկապիս գյուղյերիտ և գյուղատնտեսական դպրոցների ու գյուղատնտեսական խմբակների և այլ կոլեկտիվների համար շուրաբանչուր գլխից հառո բերված են խնդիրներ և առաջադրություններ, նյութն ավելի խորը և բազմակողմանի կիրարով մերլուծելու և գործնական աշխատանքներին ցանկալի ուղղություն տալու նպատակով։ Սրանք կնպաստեն նաև առողջ տեսակետ և մատեցում մշակելուն, վոր անհրաժեշտ և ձեռք բերել և ունենալ այս բնագավառում ես։

Ավելորդ չենք համարում շեշտել այստեղ, վար ավելի մեծ արդյունք ստանալու համար անհրաժեշտ է, վորպեսզի այդ առաջադրությունների կարգով դրված գործնական աշխատանքները կատարվեն պարտադրաբար բոլոր աշակերտների կամ խմբակի անդամների կողմից միաժամանակ և վոչ թե այս կամ այն անհատի կողմից միայն։

Այդ աշխատանքներին անհրաժեշտ և մտանակից անել և գյուղական լայն խավերին՝ զբքի առաջադրությունների մասում շույց տրված ձևերով։

Խ. ԾԵՐԻՑՑԱԿ

Հունիս, 1928 թ.
Յեղիկան—Պետհամալսարան

ՏՄԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵ. 777թ
ՏԻՐԱԺ 3000.
ՊԵՏՀՐԱՆ 798

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր տեղական տավարի մեջ պատահում են թե քիչ և թե շատ կաթ տվողները: 1927 թվին Հայաստանում կատարած կովերի կաթնառատության մրցությունը ցույց տվեց, վոր մեր տեղական կովերի մեջ կան նույնիսկ որական 35—40 ֆունտ կաթ տվողները: Բայց սրանց թիվը շատ քիչ է, Քիչ լինելու պատճառներից մեկն այն է, վոր մեր զյուղացիք ինչ տավար ասես պահում են, չեն աշխատում պահել միայն շատ կաթ տվող կովերին: և միմիայն դրանց զավակներին, այլ պահում են ամեն մի խառախուս ապրանք: Ցեթե պահեցին միայն լավ կովեր ու միայն դրանց սերունդը մեծացնելին, այն ժամանակ մեր յերկրի կովերի մեծ մասը կաթնառատ կլիներ:

Սակայն յեթե նույնիսկ այդ ընտրությունը զյուղացին կատարի, բայց շարունակի իր լավ կովերն ու դրանց հորթերը կերակրել ու պահել այնպես, ինչպես նաև կերակրում և պահում ե այսոր, միևնույն ե, հորթերը կնան մանր, դրանցից լավ կովեր չեն ստացվի, իսկ յեղած կովերն ել շատ կաթ չեն տալ:

Ուրիշն, ընտրության հետ միասին հարկավոր ե նաև կանոնավոր կերակրել ու խնամել, մասնաւոնդ մատաղ սերնդին: Փոքր հասակում վատ կերակրված հորթերը միշտ մնում են մանր լավ չեն զարգանում և ապագայում դրանցից վոչ լավ կովեր են ստացվում, վոչ ել լավ յեղներ, մսացուների մասին ել չեմ խոսում:

Մեր տավարի մանր և անարդյունավետ լինելու պատճառները զրանք են: Մեր նպատակն ե վերացնել այդ պատճառները, վորովհետեւ մենք այլևս չենք կարող բավարարվելքիչ կաթ տվագ կովերով: այդպիսիները մեզ վրա շտա թանգ են նստում:

Փորձերը ցույց են տվել, վոր յերբ մեր տեղական հորթերին լավ են կերակրում, նրանցից ստացվում են նաև խոշոր կենացանիներ: Եթե որինակ կարելի յի հիշել այս գրքում բիշ

ցուլիկներին, վորոնց կարողացել ե մեծացնել Նոր-Բայազեղի հոգ-բաժնի ֆերման: Շամսական հասակում ստացվել են մոտ 200 կիլո կենդանի քաշ ունեցող հորթեր: Ինչնիվ են սրանք պահան ուստար ցեղերից: Լավ կերակրված շվեց ցեղի հորթերն ել այդ հասակում զբանցից այնքան ել մեծ չեն լինում, իսկ վատ կերակրվածները մեր վատ կերակրված հորթերից վոչնչով չեն ստարբերվում:

Սրանից յերեսում ե, վոր մենք չպետք ե վագենք ուստար ցեղերի հետեւից ու տարվենք զբանցով, այլ պետք ե մեր կենդանիների կերն ու խնամքը լավացնենք և պահենք միայն լավերին:

Նոր-Բայազեղի ֆերման կարողացել ե այդ արդյունքներն ատանաւ, վորովհետեւ կատարել ե գիտության խոսքը, արսինքն, հորթերի կերակրումը զրել ե ուսցիոնալ հիմքերի վրա: Բայց մի ծաղկով գարուն չի լինել: հարկավոր ե, վոր ամբողջ զյուղացիությունը սովորի զիտության խոսքը և հշտությամբ կատարի այս: Վեչ մի գյուղացի այլևս չպիտի հին ձեռվ կերակրի իր հորթերին, այլ գիտության խոսքի համաձայն:

Այս գրքույկը հենց զրա համար ել զրված ե: Սրա մեջ բերված են հորթերի կերակրման զիտական հիմունքները և ցույց են տրված այն ձեերը, վորոնց կարելի յի և մեր պայմաններում կերակրել առանց մեծ դժվարությունների: Այդ նպատակով ոգտագործել եմ և մեր պետհամալսարանի անասնաբուծական ամբիոնի աշխատանքների արդյունքները:

Հորթերի ուսցիոնալ կերակրումով, ինչպես յերեսում ե այս գրքից, զարգանում և կատարելագործվում են տավարի բոլոր լավագույն ընդունակությունները: զրա չնորհիվ կենդանիները կարողանում են մեկնույն կերից ամենաշատ կաթ կամ միս արտադրել: կենդանին մեքենայի նման ե, ինչպես ամեն մի մեքենա պետք ե կատարելագործված լինի, վոր լավ արդյունք տա, այնպիս ել կենդանիները: Մեր Միության մեջ մենք սոցիալիզմ ենք կառուցում: ինչպիս վոր սոցիալիզմը չի հաշտվում անարդյունավետ մեքենայի հետ, այնպիս ել նա չի կարող հաշտվել անարդյունավետ կենդանիների հետ: Նրան պետք են այնպիսի կենդանիներ, վորոնք տվյալ պայմաններում և միջավայրում կարողանում են ամենազյունավետը լինել: Հետեւապիս հորթերի առաջինական կերակրումն այդ նպատակն աւնենալով, միաժամանակ

գառնում և սոցիալիստական շինարարության ամենալուրջ և
պատասխանառու խնդիրներից մեկը:

Հետեապես հորթերի խնամքի և կերակրման սացիոնալա-
ցումը պետք է գտնա ընդհանուրի սեփականություն և իրա-
գործվի ամբողջ գյուղացիության ձևով, այն ել, ինարկե, կազ-
մակերպված ձեռվ. Բոլոր տավարատերերին հարկավոր և կազմա-
կերպել հորթարուծական խմբակների կամ կոլեկտիվների շաւրջը-
զրա համար հարկավոր և սպառողձել առաջին հերթին կաթ-
նարահները, գյուղ-խմբակները և ապագայում կազմակերպվելիք
կոնտրոլ-միություններն ու անասնարուծական ընկերություննե-
րը: Մեծ դեր ունեն այս ասպարիզում կատարելու մանավանդ
գյուղյերիտ և գյուղատնտեսական դպրոցներն ու կոլեկտիվ
տնտեսությունները: Այս բոլոր կազմակերպությունների ջանքե-
րով և, վոր հորթերի խնամքը պիտի սացիոնալ հիմքերի վրա
դրվի և սացիոնալացումը դառնա բոլոր հորթարերի սեփա-
կանություն:

Այդ և մեր տավարին արդյունավետ դարձնելու ուղին:

1. ՀՈՐԹԸ ՄՈՐ ԱՐԳԱՆԴՈՒՄ

Հորթն սկսում է ապրել վոչ թե ծնվելու որից, այլ
մոր բեղմնավորման բոպեյից: Յեվ հենց այդ ժամանակից
հարկավոր եւ առանձին խնամք տանել սաղմինկատմամբ:
Հորթը մոր արգանդում մնում է միջին թվով 285 որ կամ
9 տմիս 10—12 որ: Այդ ժամանակամիջոցում սաղմը
անտեսանելի մանր քիչից հետզհետե աճելով, մեծանում
է ու դառնում հորթ:

Մոր արգանդում զարգանալու և մեծանալու համար
հորթը պահանջում է սնունդ, ող (թթվածին) և հանգիստ
վիճակ: Այդ ամենը նա գտնում է արգանդում: Մնունդն
ու թթվածինը նա ստանում է մոր արյան միջոցով: Յե-
թե մայրը լավ է կերակրվում, ապա նրա արյունն ել
տուատ և լինում հորթի համար բոլոր անհրաժեշտ նյու-
թերով, վորի շնորհիվ սաղմը առատորեն սնվում է և լավ
զարգանում: Իսկ յեթե մայրը վատ է կերակրվում, այն
գեղքում նրա արյան մեջ բավականաշատ սննդանյութեր
չեն մանում և հորթը լավ չի սնվում ու զարգանում: Ար-
յան մեջ յեղած սննդանյութերի պակասությունից յեր-
բեմն հորթերը սատկած են ծնվում, կամ ծնվելուց հետո
անմիջապես սատկում են, իսկ լավագույն գեղքում ծըն-
վում են թույլ և նվազ մարմնով: Պակաս կեր ստանալու
գեղքում կովերը սաղմին պահում են իրանց մարմնի հաշ-
վին, վորի պատճառով և հետզհետե թուլանում, հյուծ-
վում են: Ծնելուց հետո ել այդպիսի կովերը հազիվ են
դիմանում քաղցածության, և կաթն արտադրում են համար-

յա իրենց մարմինը քայլայելով և վերջնականապես այնքան են հյուծվում, վոր յերկար ժամանակ չեն կարողանում կաղղուրվել և առատ կտիթ պատրաստել հորթի համար:

Պարզ է, ուրեմն, վոր հորթին ու կովին առողջ վիճակում պահելու համար անհրաժեշտ է, վորպեսզի կովի կերի քանակը բավարար լինի և բացի դրանից կերի մեջ լինեն բոլոր անհրաժեշտ անդանյութերը: Այդ նպատակով հարկավոր է ծանրած կովին կեր տալ նրա պահանջի չափ, այսինքն կերակրել կենդանի քաշի և տված կաթի համեմատ. բացի դրանից կերարաժինը պետք է կազմել զանազան կերերից (խոա, գարման, քուսպ, թեփ, առվույտ և այլն): Մենակ դարմանով կերակրելն անթույլատրելի յե: Կերը պետք է լինի միանդամայն առողջարար, այսինքն չպիտի լինի թթված, կծված, բորբոսնած, հոտած փտած, սառած և ընդհանրապես, փշացած: Փշացած կերերից մայրն ել կարող է հիվանդանալ, սազմն ել: Այդպիսի կերերից կովը նույնիսկ կարող է հորթատել:

Ինչպես վերեւում առացինը, սազմին հարկավոր է և թթվածին շնչելու համար: Թթվածինը նա ստանում է մոր արյունից, հետևապես մայրն այնքան պետք է թթվածին ընդունի ողից, վոր թե իրեն բավականացնի և թե իր զավակին: Յեթե ողը կեղտու է, այսինքն, ածխաթթուն շատ է, իսկ թթվածինը պակաս, այդ դեպքում կովի արյունը չի կարող թթվածնով կշտանալ և բավարարել յերկուսի պահանջներին: Թթվածնի պակասությունից հորթը սաղմային վիճակում լավ չի զարգանում և աճում: Թթվածնի առատությունն արյան մեջ տվելի յե հարկավոր, քան սննդի առատությունը: Դրա համար անհրաժեշտ է ծանրած կովերին պահել պարզ և մաքուր ողում: Գոմերը պետք է այնպես շինվեն, վոր կարելի լինի նրանց մեջ ողը միշտ մաքուր պահել: (Տես գլուխ 10):

Պետք է աշխատել ծանրած կովերին պահել դուրսը (յեթե մըսելու վտանգ չկա), մանածել, ուղարկել արոտ, ինարկե վոչ շատ հեռու տեղեր:

Ծանրած կովին չի կարելի ծեծել, վագեցնել, լծել, քառնալ: Հղիության 4-5 ամսից սկսած դրանը այնքան վտանգավոր են, վոր հորթը նույնիսկ կարող է փշանալ: Պետք է միշտ հիշել, վոր ծանրած կովին անհրաժեշտ և պահել հանգիստ վիճակում, վորպեսզի սաղմն առանց վորեւ վտանգի կարողանաւ զարգանալ և աճել մոր արգանգում: Ծանրած կովին չպետք է սառցի տակից ջուր տալ, վորովհետեւ դրանից կովը կարող է հորթատել: Ավեմի լավ է տանը ջրել: Հղիության վերջին շաբաթներին, մանավանդ վերջին որերին, հարկավոր է ցույց տալ հատուկ հոգատար վերաբերմունք՝:

Խնդիրներ յեվ առաջադրություններ

1. Յեթե կովը առաջին անգամ ցուլով գալուց չի բեղմավորվում, ապա քանի որից հետո կրկին բեր գալու նշաններ են ցույց տալիս Ինչով են արտահայտվում այդ նշանները: Դիտեցեք և զրի անցկացրեք.

ա. Կովը սովորականից անհանգիստ է:

բ. Յելնում և ուրիշների վրա:

գ. Սեռական որգանից լորձունքանման հեղուկ և հոսում (հնտը):

դ. Սեռական որգանը սովորականից կարմիր է:

ե. Կաթը յեցնելուց կարգում է: (Փորձեցեք):

2. Բանի տեսակ և վարքան կեր ունեք տնտեսության մեջ: Պարզեցեք դրանց համեմատական սննդարժեքները:

3. Կրավականացնեն այդ կերերը ձեր կենդանիներին մինչև լավ արոտ հասնելը: (Կազմեցեք զանիսկան նորմաներով: Ձեր կենդանիների ուցիոնը ձմբան ամբողջ ըշջանի համար և

¹ Կարդա՛ Գուրին—«Ծանրած կովի խնամքը», 1924 թ.

- պարզեցիք, թե վորքան և բավարարում ձեր ունեցած կերը՝ կենդանիների պահանջներին (կազմեցիք զիազրամա):
4. Հաշվեցիք՝ քանի ամիս և կենդանին անընդհատ մնում գոմում՝ քանի ամիս՝ մասամբ և քանի ամիս և անցկացնում անընդհատ գուրսու:
 5. Բացարձեցիք, թե ինչն և պատճառը, վոր մեծ մասամբ աշխատ ծնված հորթերի կենդանի քաշը ավելի մեծ և լինում՝ քան նույնահասակ գարնան ծնվածներինը:
 6. Հաշվեցիք, քանի խորանարդ մետր ող և ընկնում ձեր գոմում մի կենդանուն և փորքան և դա բավարար համար վում կենդանու պահանջների տեսակետից:
 7. Զափեցիք գոմի հատակի և լուսանցքների (լուսամուտների) մակերեսը և հաշվեցիք, թե քանի անդամ առաջինի մակերեսը մեծ և յերկորդի մակերեսից: Վորքան պետք և լինի այդ յերկուսի հարաբերությունը, վորպեսդի լույսը բավական համարվի:
 8. Ձեր գյուղում ում կովը և հորթատել ծեծելուց, կամ վայր ընկնելու, սառը ջուր խմելու և վատ կերի հետեանքով: Քանի հորթ և ձեր գյուղում սատկած ծնվել այս տարի:
 9. Ո՞վ և ձեր գյուղում նզի (ծանրած) կովերը լծում կամ բարձում:
-

2. ԻՆՉՈ՞Ւ ՅԵՎ Ի՞ՆՉ ՊԵՏք Ե ԱՆԵԼ, ՎՈՐ ԿԹՎՈՂ ԾԱՆՐԱՄ ԿՈՎԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԱՄԱՖԻ

Մեր գյուղական ծանրած կովերը, գլխավորապես վաս կերակրելու պատճառով ծնելուց դեռ մի քանի ամիս առաջ են ցամաքում: Իսկ նորմալ պայմաններում պահած կովերը, սովորաբար, ծնելուց 2 ամիս առաջ են ցամաքում:

Սակայն պատահում են և այնպիսի կովեր, վորոնք առատորեն կեր ստանալու գեղքում շուտ չեն ցամաքում, այլ կթվում են նույնիսկ մինչեւ ծնելը: Այդպիսի կովեր պատահում են թե ոտար ցեղերի տավարի և թե մեր տեղական տավարի մեջ:

Փարձը ցույց ե տվել, վոր յեթե ծանրած կովը մինչեւ ծնելը շարունակում է կաթ տալ, ապա հետագա տարիներում նըա կիթը պակասում է, այլևս նա առաջվարդի չի կարողանում կաթ տալ և զրանից բացի ինքն ելքնդհանուր տաժամբ թուլանում է և շուտով անպետքանում:

Մյուս կրղմից պառվն ել ե տուժում: Հայտնի յեր, վոր ամենաշատ սնունդ՝ պառվը պահանջում է վերջին 2—3 ամիսներում, վարովհետեւ այդ ժամանակ սաղմն արդեն մեծացած է լինում: Ուրեմն այդ ամիսներին ավելի շատ սնունդ ե պահանջվում արյունից: Բայց բանն այն է, վոր կաթն ել ե արյան սննդանյութերից գոյանում: Ուրեմն յեթե կովը կաթ ե տալիս, պարզ ե, վոր սաղմի սնունդը պակասում է և այդ պատճառով սաղմը լավ չի զարգանում: Իսկ կովը, վորքան ել լավ ե կերակրվում, չի կարողանում միաժամանակ լրիվ բավարարել սաղմին և կաթ տալ, վորի հետեանքով, ինչպես ասված ե վերը, թուլանում է և հյուծվում:

Ուրեմն հղիության վերջին ամիսներին կովը պետք է սնունդը գործադրի վոչ թե կաթ արտադրելու վրա, այլ սաղմի զարգացման և իր կաղդուրվելու վրա: Դրա համար հարկավոր ե, վոր կովը ժամանակին ցամաքի:

Այս ամենից բացի պետք ե իմանալ, վոր յերբ կովը մինչև ծնելը կթվում է, իսկական գալ չի գոյանում կը թիւ մեջ, վորը, ինչպես հետո կտեսնենք, շատ անհրաժեշտ է նորածին հորթի համար:

Ուրեմն չպետք է թույլ տալ, վոր կովը կթվի մինչեւ ծնելը, այլ հարկավոր ե միջոցներ՝ ձեռք առնել, վոր նաժամանակին ցամաքի: Ամենալավը այն է, յերբ կովը ամբողջովին ցամաքում է ծնելուց յերկու ամիս առաջ: Իսկ յեթե չի ցամաքում, պետք ե դիմել հետեայլ միջոցներին:

Նախ պետք ե կերաբաժնի ուժեղ կերերն ու արմատապտուղներն աստիճանաբար պակասեցնել, այնպես, վոր 10—15 որ հետո դրանցից կերաբաժնի մեջ բոլորովին չլինի: Կարելի յե նաև խոտի մի մասը փոխարինել դարձանով: Դրանից հետո պետք ե կրծանել և կթելու ժամերը: Սկզբում պետք ե կթել որական մեկ անգամ, յեթե մինչ այդ յերկու անգամ եր կթվում, հետո՝ որ ու մեջ մինչև վոր կողման ամբողջովին ցամաքի: Միշտ պետք ե ցամաք կթել, վոր կրծի մեջ կաթ չմնա: Հասկանալի յե, վոր ցամաքեցնելու աշխատանքը պետք ե սկսել այն հաշվով, վորպեսզի կովը մեր ցանկացած ժամանակին ցամաքի:

Յերբ կովը բոլորովին ցամաքել ե, պետք ե սպասել 10—15 որ և նորից սկսել նրան ուժեղ կերտալ, մոտավորապես 1—2 ֆունտ որական, իսկ իստ կարելի յե տալ ելի առաջիկ չափ:

Ծնելուց հետո կերը պետք ե տալ կենդանի քաշի և կաթի համեմատ:


Խնդիրներ յեվ առաջադրություններ.

1. Հաշվեցեք, քանի ամիս են կթվում ձեր կովերը, վոր ամիսներին են սովորաբար ցամաքում և մինչև ծնելը քանի ամիս են ցամաք մնում:
2. Ի՞նչ նշաններից եք իմանում, վոր կողման սկսում ե ցամաքել (կաթի քանակը, համը, թանձրությունը, շաղվելը):
3. Կազմեցեք ձեր զյուղի ուշ ցամաքող կամ մինչև ծնելը կթվող կովերի ցուցակը և գտեք յերկար կթվելու պատճառները (ցեղական կամ անհատական հատկությունն, առատ կերպային): Դիտեցեք՝ արդյոք յերկար կթվաղները միաժամանակ և շատ կաթ տվողներ են:
4. Կատարեցեք հետեւյալ փորձը: յերբ տեսնում եք, վոր ցամաքելու շրջանն սկսվել ե, ձեր կովին սկսեցեք տալ ուժեղ կերեր (բուսպ, ցորենի թեփ, գարու ալյուր և այլն) և ճանդեղ կամ կարտոֆիլ և այլն և 2 շաբաթ շարունակ ամեն

որ գրի անցկացրեք կաթի քանակը: Վորոշեցնեք քանի ֆլուտով և ավելացնել որակիթը և վորքան և յերկարացնել կաթնատվության շրջանը:

3. ՀՈՐԹԻ ԾՆՈՒՆԴԸ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ԽՆԱՄՔԸ

Ամեն մի զյուղացի ծանրած կովի նշաններից կարող ե իմանալ վոր ծնելու ժամանակը մոտեցել ե: Ծնելուց մի քանի ժամ, իսկ շատ անգամ, մի յերկու որ առաջ կողման սկսում ե անհանգիստ դառնալ. տնքում ե, բառաշում, մերթ նստում ե, մերթ վեր կենում: Այդ ժամա-



Ց. 1.

Հորթի նորման ծնունդը, յերբ հաճախ ոգնության կարեք չի լինում:

Նակ պոչարմատի կողքերի փոսերը շատ խորացած են լինում, մեծ ացած ու շատ փափկած, կուրծն ու պտուկները սաստիկ լցվում են, սեռական գործարանի արտաքին մասերը փափկվում, մեծ անում են, իսկ սեռական անց-

քը լայնանում ե և միջից լորձունք ե հոսում: Ծննդաբերական ցավերը հետզհետե սաստկանում են: Այդ ժամանակ հարկավոր ե կովի կապը բաց տնել, վորովեսզի իրեն ազատ զգա: Քիչ հետո սեռական գործարանից դուրս ե գալիս հեղուկով լիքը մի տոսլրակ, վորի մեջ յերեսում են հորթուկի վուճները, կովը ուժ ե տալիս, տոսլրակը պատռվում ե, վորից հետո յերեսում ե հորթուկի դնչիկը, վոր զրված ե լինում յերկու տուաջին վստգերի վրա: (Տես նկ. 1):

Յերեմիա տոնպակը յերկար ժամանակ չի պատռվում,



64, 2.

Հորթն անկանոն և ծնվում, վիզը կողքի վրա ջալած։ Անհրաժեշտ են անասնաբույժի դիմել կամ վիզն ուզգել, վոր ծնվի։

մառմ ե կախված։ Տոպրակի հեղուկն իր ծանրությամբ ոգում ե հորթի դուրս գալուն, այնպիս վոր չպետք ե շտապել պատռել այն։ Ընդհանրապես ծնունդն առանց դժվարությունների յե կատարվում, բայց լինում են և զեսքեր, յերբ կովը դժվարությամբ ե ծնում։ Լավ ե թողնել զսր



Gli. 3

կովը ծնի առանց ոգնության: Սակայն լինում են դեպքեր, յերբ կովը իսկապես վար չի կարողանում առանց ոգնության ծնել նույնիսկ այն դեպքերում, յերբ հորթը արգանգում ուղիղ ե պառկած (զունչը զրած յերկու վոտքերի վրա): Այդպիսի դեպքերում կարելի յե և ոգնել, իսկ յեթե հորթը ծուռն ե ծնվում, այսինքն՝ վիզը ծալած, վոտները նույնպես, մեջքը դեպի առաջ՝ և այն (աես նկար 2, 3, 4), հարկավոր ե դիմել անասնաբույժին¹: Ոգնելիս բանում են հորթուկի վոտքերից (ծնկների մոտից) և շատ զգուշությամբ քաշում են դեպի դուրս: Հարկավոր ե դիմել կովի ուժ տալուն և հենց ուժ տայու ժամանակ զգու-

Հորթն անկանոն և ծնվում, մեջքն ուղղած դեղի դուրս:


Հությամբ քաշել հորթի փոտներից և վոչ թե ցանկացած
ժամանակ, հակոռակ դեպքովմ կովն ել, հորթն ել կարող
են վնասվել: Դժվարը գլխի դուրս դախնեւ: Հարկավոր և ու-
շագրություն դարձնել փոք ծնելիս հորթը չընկնի և
չվնասվի:

Հայրենական պատմությունը՝ Վահագին և Շահագին ազգական պատմությունը, 1924 թ.:

Ծնելու տեղը պետք է տաք լինի, վոր վոչ կովը մըսի, վոչ հորթը, կովի տակ պետք է մաքուր լինի: Լավ է, յեթե տակը մաքուր ծղոտ է փռած:

Ծնվելուն պես հարկավոր է հորթի բերանը մաքրել լորձունքից (լեզվի բալիշից) մաքուր լվացած մատներով: Պետք է մաքրել և քթածակերը, վոր հորթն ազատ չնչի: Խորհուրդ են տալիս ծնոտի ծայրով զգուշությամբ խուսուտ ածել քթի ծակը, վորից հորթը փոշտում է և քիթը մաքրվում: Սրանից հետո հարկավոր է մաքուր դոլ ջրով լվանալ գունչը և մաքուր շրով ցամաքեցնել:

Ծնված հորթի պորտը պետք է սուր և մաքուր դաշնակով կտրել 2—3 վերշոկ յերկարությամբ և միջից արյունը դուրս հանել, պորտը մատով դրսից հուպ տալով: Ապա հարկավոր է պորտը անմիջապես լվանալ 2⁰/₀ կարբույան հեղուկով, կամ յեռացրած դոլ ջրով: Պորտի կտրած տեղը կարելի յերսել և ձյութ, յոդ և ուրիշ հականեխիչ նյութեր: Լվանալու և ախտահանիչ նյութեր քսելու նպատակն այն է, վոր հորթերը պորտի կեղտերից չվարակ: Նկ. 4. Հորթն անկանոն և ծնվում, վեն սպիտակ փորլուծով, վոր վիզը ծալած դեպի հետ պիտի կությունը կուտած է:



Հորթի մարմինն իսկույն հարկավոր է լորձունքից մաքրել, ցամաքեցնել, վորպեսզի հորթը թացությունից չմրսի և կեղալ վրան չմնա: Սովորաբար ծնելուց անմիջապես հետո կոմի ինքն և սկսում հորթին լիզել և այդպիսով մաքրում, ցամաքեցնում և մարմինը: Զպետք է թույլ տալ, վոր կովը լիզե հորթուկի պորտը, վորովհետեւ լիզելուց հորթը կարող է վարակվել սպիտակ փորլուծով:

Կովի լիզելն այն առավելությունն ունի, վոր բացի կաշչն մաքրելուց, նա իր լեզվով մաժում և և ամբողջ մարմինը, վորի հետեանքով կանոնավորվում է շնչառությունն ու արյան շրջանառությունը:

Յերրեմն կովերը չեն ընդունում հորթերին և հըրաժարվում են լիզելուց: Լիզելու տրամադրություն առաջ բերելու համար գյուղացիք յերեմն հորթի կաշվի վրա շաղ են տալիս աղ, ալյուր կամ թեփ: Այդ սովորությունը վնասակար հետեանքներ կարող ե ունենալ աղից կաշին սառչում և և հորթը կարող է մըսել: Լիզելու ժամանակ աղի կոչտ մասերը կարող են կաշին քերծել, իսկ ալյուրը խմորանում և կախում ե կաշվի ծակոտիները, վոր նույնպես վնասակար ե: Այնպես վոր այդ սովորությունները պետք է բոլորովին թողնել:


Յերբ կովը չի լիզում կամ յերբ ցանկանում ենք առանց հորթի կթել, այդ դեպքում պետք է ծնելուց անմիջապես հետո հորթին առանձնացնենք և ինքներս մաքրենք հորթի մարմինը: Դրա համար հարկավոր է կոշտ շորով կամ վոչ սառը ծղոտով մաքրել մարմինը լորձունքից, կաշին ցամաքեցնել և կես ժամ շփել մարմինը: Ծղոտով պետք է շփել առաջից դեպի հետ և մազի ուղղությամբ: Վոտները պետք է լավ մաժել:

Հարկավոր է նորածին հորթին տաք, փափուկ և մաքուր տեղ նստեցնել: Յեթե տեղը ցուրտ է, պետք է հորթին շորով ծածկել և տակը ծղոտ փոել և վոչ թե՛ խոտ կամ գարման¹⁾: Ծնվելուց 3—4 ժամ անց կարելի յերբ հորթին դալ տալ:

Դալը համ լավ սնունդ է հորթի համար, համ ել լավ լուծողական՝ նորածին հորթի փորը մաքրելու համար: Բանն այն է, վոր մօր արգանդում յեղած ժամանակ հորթի աղիքներում կեղտոտություն է կուտակվում: Յեթե

¹⁾ Խորհուրդ ենք տալիս կալի ժամանակ ծղոտ վերցնել—պահել թե այդ սպիտակի և թե մանավանդ տակը փոելու համար:

ծնվելուց հետո հորթի աղիքները և ստամոքսը չմաքը վեն այդ կեղտոտություններից, նա կարող է հիվանդանալ, մարսողության խանգարում ստանալ: Դրա համար ել հարկավոր ե անպայման դալ խմեցնել հորթին: Սրա վրա առանձնապես շեշտում ենք, վորովհետեւ մեր դյուզացիներից շատերը զանազան նախապաշարմունքների հետեանքով դալ չեն տալիս հորթին, համարում են այն



6կ. 5.

Հորթը դույլից և կաթ խմում:

վլասուկար և հորթի սպիտակ փորլուծը սխալմամբ վերադրում են դալին, մինչդեռ դալը բացի ոգուտից, վոչ մի վնաս չունի՝ չափավոր տալու դեպքում:

Դալը կարելի յե տալ թե ծծեցնելով և թե խմեցնելով ամանից: Յերբ հորթը մաքրվում է և ուշքի յե դալիս, սկսում ե փորսնել մորը, աշխատում է կանգնել, լունել պառկները և ծծել: Յեթե հարկավոր է ծծեցնելով կերպել հորթին (վոր խորհուրդ չենք տալիս), պետք ե

զգուշությամբ մոտեցնել նրան կովի կրծին, կանզնեցնել և պառկը դնել բերանը, վոր ծծի: Զպիտի մոռանալ ծծեցնելուց առաջ կովի կուրծը և պառկները դու մաքուր ջրով (ավելի լավ ե՝ սապնով) լվանալ, ցամաքեցնել մաքուր շորով և միքանի անգամ կթել զետին, վորպեսզի կաթի առաջին շիթերը դուրս դնալով մաքրեն պլառուկների անցքերը:

Վորքան պետք ե կաթ տալ հորթին առաջին անգամ: Շատերը թողնում են, վոր հորթը խմի (կամ ծծի) վորքան վոր կկամենա: Բայց դա վլասուկար ե, վորովհետեւ կարող ե մարսողության խանգարում առաջացնել: Ավելի լավ ե քիչ տալ: Առաջին անգամ մեկ բաժակից ավելի չպիտի տալ: Առաջին որը կարելի յե 3—4 անգամ կաթ տալ, բայց ամբողջ կաթը 2+4 բաժակից ավելի չպիտի լինի: Յերկրորդ և յերրորդ որը կարելի յե մի քիչ ավելացնել, բայց վորչ միքանգամից, այլ աստիճանում կաթի սպիտի լինի:



6կ. 6.

Հորթին ծծեցնելու կաթնաման արհեստական պառկով (ըստ Կրանախերի)

ձանաբար: Ծննդկան կովին պետք ե կթել ծնելուց 3—4 ժամ հետո: Հենց այդ ժամանակ ել հորթին առաջին անգամ կամ ծծեցնում են կամ կաթ խմեցնում:

Կաթը պետք ե տալ հորթին առանց հովացնելու: Հիշված ժամանակից շուտ կթելը կովի վրա վատ ե ազդում: Հարկավոր է վորպեսզի ցավերն անցնեն, հանգստանա և ապա կթել:

Ամանից կաթ խմելը հորթին սովորեցնում են հետեւյալ կերպով: Զեռքերը սապնով մաքուր լվանում են, մատը մացնում կաթի մեջ, հորթի դունչը մոտեցնում

կաթին և մատը կաթի միջից դնում հորթի բերանը: Հորթը բնազդորեն սկսում է մատը ծծել և ծծելով կաթը խմել: Յերբեմն հարկավոր ե մատը բերանից հանել, վորպեսզի հորթը, հետզհետե սովորի խմել և առանց մատի: Այդպես անելով մի յերկու որից հետո հորթն արդեն սովորում ե ամանից խմել առանց ոգնության: Պետք ե ամանը շատ մաքուր լինի և միշտ մաքուր պահպի, հակառակ գեղքում հորթը կարող ե ամանից վարակվել: Նկ. 5-ում ցույց ե տրված, թե ինչպես է հորթը դույլից կաթխմում:

Արտասահմանում դորձ են ածում պտուկավոր կաթնամաններ հորթին կաթ ծըծեցնելու համար: (Տես նկ. 6 և 7):

Ամանի տակից մի անցք ե բացած, վորի մեջ ամրացված ե ռետինե պտուկը (ծիծը): Պտուկի հիմքում մանր ծակեր են թողնված, մի ծակ ել պտուկի ծայրին, վոր ծծելիս կաթը պտուկի միջով անցնի հորթի բերանը, կաթն ածում են ամանի մեջ, վոր-

քան ցանկանում են միայն մանից կաթ ծծում (ըստ Կրնախերի) հարկավոր ե, վոր հիմքի ծակերը կաթով ծածկված լինեն: Հորթը շատ հեշտությամբ սովորում ե ծծել: Ի՞նչ խոսք: վոր ամեն անգամ ծծելուց առաջ և հետո պտուկը հարկավոր ե տաք ջրով և յերբեմն սողաջրով լվանալ:

Ծննդկան կովերը սասակի ծաբավում են, բայց պաղջուր տալլը վատանգավոր ե. զբա համար հարկավոր ե ջուրը գոլացնել: Ավելի լավ ե ալյուրից գոլ ջրով լափ պատրաստել և տալ կովին խմելու: Յեթե տեղը ցուրտ ե, հարկավոր ե ծննդկան կովին շորով ծածկել:



Նկ. 7.

Ի՞նչպես է հորթը պտուկավոր կաթնաքան ցանկանում են միայն մանից կաթ ծծում (ըստ Կրնախերի) հարկավոր ե, վոր հիմքի ծակերը կաթով ծածկված լինեն: Հորթը շատ հեշտությամբ սովորում ե ծծել: Ի՞նչ խոսք: վոր ամեն անգամ ծծելուց առաջ և հետո պտուկը հարկավոր ե տաք ջրով և յերբեմն սողաջրով լվանալ:

Խնդիրներ յեվ առաջադրություններ

1. Ի՞նչ արտաքին նշաններից եք իմանում, վոր կովը ծանրած ե:
2. Այդ նշանների հիման վրա գուշակեցնեք ծնելու ժամանակը և հաշվեցնեք թե քանի որով եք սիսակել և վոր նշանի հորթին:
3. Նորկայեղեք հորթի ծնվելու ժամանակ և ընդունեցնեք հորթին: Մանրամասն նկարագրեցնեք ծնունդը և այն ինսամքը, վոր դուք տարաք հորթի նկատմամբ: Արդյոք ամեն ինչ կատարեցնեք այնպես, ինչպես զրված ե այս գրքում: յեթի վոչ, ինչո՞ւ:
4. Կովիրի ծնելու շրջանում հրավիրեցնեք ձեր զյուղի կովատեր կանանց ժողովի և բացատրեցնեք նրանց գալի նշանակությունը. վորքան պետք ե դալ տալ նորածին հորթին, որական քանի անգամ: Զմոռանաք պտրպել, թե ի՞նչից ե առաջանում սպիտակ փորելուծ և ի՞նչպես պետք ե դրա առաջն առնել:
5. Ծնելուց քանի ժամ անց կթեցնեք կովին, զալ ավելի հորթին, ինչպես տվիք՝ ծծեցնելով թե խմեցնելով. ինչո՞ւ:
6. Ի՞նչո՞վ ախտահանեցնեք պորտը՝ յոդով, կարբույան հեղուկով, թե մի ուրիշ միջոցով:

4. Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՐ ՏԱԼ ՀՈՐԹԻՆ՝ ՇՄԵՑՆԵԼՈՎ, ԹԵ՛ ԱՄԱՆԻՑ ԽՄԵՑՆԵԼՈՎ

Հայտնի յե, վոր մեր տեղական հորթերը մոր տակին են մեծանում: Շատերը կարծում են, վոր մեր կովերն առանց հորթի չեն կթվի, այդ պատճառով կթելուց առաջ և հետո ծծեցնում են հորթին: Սակայն փորձերը ցույց են տվել, վոր այդ կարծիքը միանգամայն սիսակ ե, վոր մեր տեղական կովերնել կարող են կթվել առանց հորթի, ինչպես ոտար ցեղերի կովերը: Միայն հարկավոր ե նրանց սկզբից սովորեցնել և ընտելացնել մեր ցանկացած ձերն:

Կարող են ինարկե կովերի մեջ պատահել և չար ու անհաջող բնավորություն ունեցողներ, վորոնց գժվար կինի առանց հորթի կթել, բայց սրանց թիվը քիչ ե: Ի՞նչն ե մեզ ստիպում կովին կթել առանց հորթի:

Միթե դա այսքան կարեոր եւ Մրան պատասխանելու համար համեմատենք յերկու ձեի պակասություններն ել, առավելություններն ել:

1. Հորթերին պահելու և լավ աճեցնելու առաջին պայմանն այն եւ, վոր հորթն այնքան կաթ ստանա, վորքան պահանջում ե նրա մարմինը աճելու և զարգանալու համար: Մորը ծծելու դեպքում հայտնի չի լինում, թե վորքան կաթ ե ծծում հորթը. յեթե պահանջածից շատ ե ծծում համար տնտեսության համար ե վնաս և հետո հորթին ել կարող ե վնասել, իսկ յեթե պահանջածից քիչ ե ծծում հորթը կանոնավոր չի զարգանում, մնում ե թույլ և փոքր:

2. Ծծելու դեպքում կաթի վերջին, ամենայուղալի մասը հորթին ե մնում, վորի կարիքն այնքան ել մեծ չե հորթի համար, բայց տնտեսությունն իզուր տեղը տուժում ե:

3. Հորթին մոր տակին պահելու դեպքում հնարավոր չե կաթնառատ մորը ցամաք կթել, վորի պատճառով ել կովի կաթնատվությունն ընդհանրապես իջնում ե:

4. Կթելու ժամը մոտենալիս, մայրն սկսում ե անհանգստանալ, ջղայնանալ, անհամբեր սպասում ե հորթին ե, այդ ջղային դրության շնորհիվ, կովի կիթը պակաս և ստացվում:

5. Յերբ մայրը հիվանդ ե, դժվար ե լինում հորթին սովորեցնել կաթ խմելը, վոր գոնե ուրիշ կովի կաթ խմի: Մինչև սովորեցնելը հորթը շատ ե տուժում:

6. Ծծեցնելը պահանջում ե շատ աշխատանք և ժամանակ: (Հորթին բերելը, նախապես ծծեցնելը, հետո կապելը, վոր կովին կարելի լինի կթել, կթելուց հետո յել նորից թողնելը, վոր ծծի, այնուհետև նորից առանձնացնելը կովից):

7. Մորը ծծելու դեպքում, յեթե հորթը հիվանդանում ե կամ ստուգում, շատ հաճախ մայրը թույլ չի տա.

Իսկ կթելու և շուտով ցամաքում եւ թեկ այս դեպքերում զանազան միջոցների յեն դիմում, բայց այդ միջոցները շատ դեպքերում չեն ոգնում:

8. Կրվի տակին պահելու դեպքում հորթերն ավելի վայրենի յեն մեծանում, քան ձեռքից խմեցնելիս:

9. Հաճախ, տնտեսության համար ձեռնտու չի լինում հորթին պահել, մեծացնել, բայց ծծեցնելու դեպքում ստիպված են լինում պահել, վորպեսզի կովը չցածրքի:

10. Հորթին ձեռքից կերակրելու դեպքում հնարավոր ե լինում $1-1\frac{1}{2}$ ամսից հետո տալ քաշած կաթ և 2-3 ամսից հետո բոլորպին դադարեցնել կաթ տալը. մի հանգամանք, վոր բավականին եժանացնում ե հորթի պահելը: Ծծացնելու դեպքում այդ հնարավոր չի լինում անել և ստիպված են լինում ծծացնել 7-8 ամիս, մինչև կովի վերջնական ցամաքելը:

Այսքանը բավական ե, վորպեսզի մենք առանց տատանվելու ընդունենք, վոր հորթին կովի տակ պահելը վնաս ե և հարկավոր ե այդ սովորությունից միանգամայն հրաժարվել:

Շատերը կովի տակին պահելու միակ առավելությունն այն են համարում, վոր այս դեպքում հորթը պառկից անմիջապես կաթ ստանալով վարակումներից և հիվանդություններից իբրթե ազատ ե մնում, վորովհետև ընդհանրապես պառկի կաթը մաքուր ե ու անարատ, իսկ ամանից խմելու դեպքում վտանգ կա, վոր ամանը կեղտուալ լինի և հորթը վարակվի զանազան հիվանդություններով: Այս միայն մասամբ ե ճիշտ: Հորթերը շատ հաճախ վարակվում են և կեղտուա պառ կներից, կթողի կեղտուա ձեռքերից, այնպես վոր թե ծծեցնելու և թե խմեցնելու դեպքերում վարակումից ազատ պահելու համար

անհրաժեշտ է միայն խիստ մաքրություն պահպանել, իսկ կեղտոտության դեպքում յերկուսն ել վտանգափոր են:

Վորքան պակասություններ ունի ծծեցնելը, նույնքան ել առավելություններ ունի խմեցնելը, Յերկրորդ դեպքում միանգամայն հնարավոր ե դաստիարակել հորթին այնպես, ինչպես մեզ ձեռնառու յե և ինչպես մենք ցանկանում ենք: Ծծացնելիս՝ այդ հնարավորությունը չունենք:

Հորթին ամանից խմացնելու դեպքում հարկավոր ե ճշտությամբ կատարել հետեւյալ պայմանը, ամեն որ կաթտալուց առաջ և հետո հարկավոր ե կաթի ամանները (կովկիթը և այն ամանը վորթից խմում ե հորթը) յեռացրած տաք ջրով լվանալ, իսկ շաբաթը մի-յերկու անգամ լվանալ տաք մոխրաջրով ու հետո մաքուր տաք ջրով:

Ամեն անգամ կթելուց առաջ, պետք ե ձեռքերը լվանա սապոնով, պտուկները գոլ ջրով, իսկ յերբեմն ել սապոնով, և մաքուր ջորով ցամաքացնի: Մաքրության այս պայմանները կատարելով միշտ կարելի յե վարակման առաջն առնել:

Խնդիրներ յել առաջադրություններ

1. Թվեցեք ծծեցնելու և խմացնելու առավելություններն ու պակասությունները:
2. Վարոշեցեք կաթի յուղի տոկոսը կթելու սկզբում և կթելուց հետո և համեմատեցեք իրար հետ և նորմալ կաթի հետ:
3. Ծծելուց առաջ և հետո հորթին կշռելու միջոցով վարոշեցեք թե վորքան կաթ և ստանում հորթը ծծելու միջոցով (գյուղում ընդունված ձևով) և բավական և արդյոք այդ քանակը հորթի կանոնավոր զարգացման համար. (տես գլ. 6):

5. ԲՆՇՊԵՍ ԱՆԵԼ, ՎՈՐ ԿՈՎԸ ԿԹՎԻ ԱՐԱՆՑ ՀՈՐԹԻ

Կովին առանց հորթի կթվելուն պետք ե սովորեցնել առաջին ծնից, վորովհետև խամածին (առաջին անգամ ծնած) կովերն ավելի շուտ են սովորում դրան: Մի քանի անգամ ծնած կովերի մեջ ել են պատահում հեշտ սովորող կենգանիներ, բայց ավելի քիչ:

Ծնվելուն պես հարկավոր ե հորթին առանձնացնել մորից, ցույց չտալ նրան և կովը կթել առանց հորթի: Իհարկե, միշտ չի հաջողվում առաջին անգամից հաշտեցնել կովին առանց հորթի կթվելուն: Սովորաբար, կարիք ե լինում մի քանի որ, վորպեսզի կովը վերջնականապես հաշտվի դրա հետ: Շուտ ընտելանալը կամ չընտելանալը կախված ե կովի բնավորությունից, այնպես վոր կարող են պատահել և այնպիսի կովեր, վորոնք բնավ չհաշտվեն առանց հորթի կթվելու հետ: Այդպիսիների նկատմամբ մենք առանձին ձեւ ենք մշակել և խորհուրդ կտանք բուլութին կիրառել այդ: Կթելուց առաջ հարկավոր ե թույլտալ վոր հորթը մեկ անգամ բերանով բռնի (շփի) պտուկները (յեցնի, գրգորի կովին, բայց չծծի) և իսկույն հետ քաշել, կամ կապել կովի առաջին վոտները և կթել կովին բուլորովին ցամաք, վոր կաթ չմնա կրծի մեջ: Կարելի յե և թույլ չտալ, վոր հորթը պտուկները բռնի, այլ ուղղակի պահել նրան կովի առաջ առանց կրծին մոտեցնելու: Կթելուց հետո հորթին անմիջապես հարկավոր ե հեռացնել, թույլ չտալ վոր ծծի և կաթ տալ նրան ամանից, կովին ընտելանալով այդ ձեին և հույս չունենալով, վոր հորթը ծծելու յե՝ կաթը վեր չի քաշի: Ինչպես ցույց տվին մեր կատարած փորձերը. այս ձեւը հեշտությամբ կարելի յե կիրառել թե մի քանի անգամ ծնած կովերի նկատմամբ և թե ամենաչար և անհաշտ կովերի: Թեև այս

ձեր իդեալական չի կարող համարվել, վորովհետև մեզ չի ազատում այն ավելորդ աշխատանքից, վոր անխուսափելիորեն կապված ե հորթին կովի մոտ բերելու հետ (հորթին բերելը, կովի մոտ պահելը և այլն) բայց և այնպես որանով միանգամայն լիովին ապահովվում ե հորթի կանոնավոր, ռաջիոնալ կերակրումը և դաստիարակումը. հնարավորություն ե արվում այնպես կերակրել, ինչպես ձեռնատու և ցանկալի յե մեզ համար: Այլիս դյուղացիք առարկելու վոչինչ չեն ունենա, յերբ նրանց խորհուրդ կտան հորթերին ամանից կերակրել առանց ծծացնելու և կասկած չկա, վոր կհետեւեն այդ խորհուրդներին, և դրանով կհեղաշրջեն մեր տափարի դաստիարակության գործը:

Շատ անգամ պատահում են այնպիսի ծննդկան կովեր, վորոնք իրենց հորթերին չեն ընդունում, չեն լիզում, խրտնում են նրանցից, հարու յեն տալիս, թույլ չեն տալիս ծծելու, կարձ՝ ինչպես ժողովուրդն ե ասում՝ «ալմազ են անում»: «Ալմազ անելը» բացադրվում ե նրանով, վոր ծննդաբերության ցավերից կովերը շատ ջղայնանում են, ուղեղի ժամանակվոր ցնցում են ստանում, վորը հետո անցնում ե ցավերի հետ միասին.

Հարկավոր ե կովի այդ դրությունից ամեն՝ կերպ ոգովել և, իսկույն հեռացնելով հորթին, այլիս ցույց չըտալ կովին և հանգստանալուց հետո կթել առանց հորթի: Յերեմի, այդպիսի կովեր հանգստանալուց հետո կթվում են այնուհետև շարունակ առանց հորթի:

Խնդիրներ յեվ առաջադրություններ

1. Զեր կատարած պրոպագանդի հետեանքով քանի տուն և արդեն կթում իր կովերն առանց հորթի կամ առանց հորթին ծծացնելու:
2. Ում ե հաջողվել «Ալմազ անելուց» ոգովել և կովը առանց հորթի կթել: Կազմեցեք ցուցակ և անունները տպագրեցեք

ձեր պատի թերթում և թղթակցություն գրեք այդ մասին «Մաճկալուում»:

3. Զեր խմբակում վորոշում կայացրեք, վորի ուժով բոլոր անդամները պարտավորվում են իրանց կովերը կթել առանց հորթերին ծծեցնելու և հորթերին կաթ տալ խմեցնելով և վոչ թե ծծացնելով:
4. Եռևյապիսի վորոշում աշխատեցեք կայացնել ձեր թաղի կանանց ժողովում:
5. Պատի թերթում հողվածներ դրեցեք կովերին առանց հորթերի կթելու ձեերի և նշանակության մասին:
6. Գյուղսեկցիայի հետ գյուղի ընդհանուր ժողով հրավիրեցեք և քննության դրեք կովերին առանց հորթերի կթելու խրնդիրը, աշխատելով, գոնե, ընդունել տալ այն ձեր, յերբ հորթը միայն ներկա յե գտնվում կթելու ժամանակ, բայց չի ծծում վոչ կթելուց առաջ, վոչ ել հետո:

6. ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Ա. ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. Ի՞նչորես ե ԳՅՈՒՂԱՑԻՆ ՀՈՐԹԵՐԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ ՅԵՎ Ի՞նչորես ՊԵՏՔ Ե ԿԵՐԱԿՐԵԼ
(Ընդհանուր երմութեների պարզաբնում)

Առաջին ամիսներին հորթերի բնական և գլխավոր կերը կաթն եւ կաթը շատ սննդաբար եւ և հեշտությամբ մարսվում ե հորթերի կողմից: Յերբ հորթերը մատաղ հասակում իրանց մարմինի պահանջի համեմատ կաթ են ստանում շուտ են մեծանում, լավ զարգանում և խոշոր կենդանիներ են դառնում: Իսկ յերբ հորթերը պակաս կաթ են ստանում մնում են մանր ու թուլակազմ: Հորթերի ապագա գարգացումը կախված է նրանից, թե վօրքան կար են սացել նրանք առաջին յերկու ամսում, մանավանդ առաջին ամսում: Մատաղ հասակում վատ կերակրելիս՝ գժվարությամբ ե լավ կենդանի ստացվում: Մրանից հետեւում ե, վոր առաջին յերկու ամսում հոր-

թերին պետք ե այնքան կաթ տալ, վոր նրանք կանոնաւ-
վոր աճեն և զարգանան։ Իսկ դրա համար հարկավոր ե-
նախ և առաջ պահանջի չափը վորոշել։

Պահանջի չափն ել վորոշելու համար հարկավոր ե-
իմանալ հետեւյալը.

1. Վոր տարբեր ցեղեր տարբեր պահանջներ ունեն
և կերակրելուց առաջ պետք ե իմանալ այդ պահանջներն
ու առաջնորդվել դրանցով։

2. Վոր ավելի լավ ե պահանջից ավել կաթ տալ,
քան պակաս, մանավանդ առաջին ամսում։

3. Վոր կաթով կերակրելն անհրաժեշտ է շարունա-
կել մինչև 2—3 ամիս և առանձնապես կարիք չկա ավելի
յերկար ժամանակ կաթ տալ հորթերին։

4. Վոր կաթի քանակը մոտավորապես պետք ե հա-
մապատասխանի հորթի կենդանի քաշին և նրա աճելու
թափին. այսինքն՝ կաթը պետք ե տալ հորթի քաշի հա-
մաձայն, նկատի ունենալով և այն, թե որական վորքա-
նով ե ավելանում կենդանի քաշը։

5. Վոր 2—3 շաբաթից հետո այլևս միտք չունի շա-
րունակել անպայման միայն անարատ կաթով կերակրելը,
այլ կարելի յե անարատ կաթի հետ տալ և քաշած կաթ,
իսկ վերջում՝ միայն քաշած կաթ։

6. Վոր չափազանց առատ կաթ տալուց հորթերն
արագ են զարգանում և կարձ ժամանակամիջոցում նրանց
կենդանի քաշը մեծ չափով ավելանում ե և այդպիսինե-
րից, ընդհանրապես, կարող են ստացվել փիրուն կեն-
դանիներ, վորոնք հակված են լինում գերանալու և ճար-
պակալելու։

7. Վոր հորթին չափազանց առատ կաթով կերակրե-
լը չի բարձրացնում ապագա կովի կաթնառատությունը,
իսկ անբավարար կերակրումը կարող ե բացասաբար ազ-
գել կաթնառատվության վրա։

Մեր տեղական տավարի հորթերի կաթի պահանջը
վորոշելու համար պետք ե զեկավարվել այս հիմունքնե-
րով և նկատի առնել մեր տեղական տավարի գլխավոր
հատկությունները։

Մեր տավարը միջակ մեծ վթյուն ունեցող ցեղերի
շարքին ե պատկանում։ Յեթե նրա մեջ պատահում են
շափազանց մանր կենդանիներ, տպա պատճառն այն ե,
վոր, մեծ մասամբ կերապակաս լինելով, նրանք չեն ա-
ճել-մեծացել։ Ընդհանրապես, մեր տեղական տավարը
քնվելու որից կերապակաս ե. վոչ կաթն ե բավարար չա-
փնվելու որից կերապակաս ե. վոչ կաթն ե բավարար չա-




64. 8.

Թամուր ցուլիկը, 14 տմսական,
կենդանի քաշը 250 կիլո

միով ստանում, վոչ ել մյուս կերերը։ Այդ պատճառով ել
նրա զարգացումը շարունակ կիսատ և մնում։ Յեթե մեր
տավարը նորմալ պայմաններում պահպի, ծնվելու որից
լավ կերակրվի, նա յել խոշոր, մեծ կենդանի կղառնա-
իբը որինակ կարելի յե բերել նոր-Բայազետի կաթնա-
ռատեսական ֆերմայի փորձերը։ Այդ ֆերմայում մեր
տեղական կովերի հորթերին կերակրել են կանոնավոր


Կերպով, հորթերի պահանջի համաձայն։ Այդ հորթերն այնպես են մեծացել, ինչպես մեծանում են արտասահմանի խոշոր ցեղերի հորթերը (որինակ՝ շվիցները) լավ կերակրման ժամանակ։ Առանձնապես զարմացնում են բանց կենդանի քաշը։ Որինակ՝ հորթերից մեկը, թամուր անունով ցուլիկը, 14 ամսական հասակում ունեցել է 250 կիլո կենդանի քաշ (տես նկ. 8), Որիու ցուլիկը 7 ամսական հասակում ունեցել է 178 կիլո, (տես նկ. 9), իսկ նույն հասակի Միջկան՝ 188 կիլո (տես նկ. 10), Յեթէ



6կ. 9.
Որիու ցուլիկը, 7 ամսական, կ. քաշ 178 կիլո

նույն Որիու, կամ թամուրն ու Միջկան, կերակրվելին մի վորեւ գյուղացու կողմից, նրանց քաշը նույն հասակում 32—48 կիլոյից ավել չեր լինի։ Համեմատելու համար, նկար 11-ում բերված ե Նոր-Բայազետի քաղ. Արևշատյանի 16 ամսական մողին, վորի քաշն ընդամենը հետ. այդ դեռ քաղաքում ֆերմայի ցուլիկների ըակրված, քան գյուղացիներն են կերակրում։
Գյուղացիների հորթերը կերակրելու պահասությունը

հասկանալու համար պետք ե ծանոթանալ նրանց կերպակելու ձեի հետ։ Մեր գյուղացիք սովորաբար, մոտ քա-



6կ. 10.
Միջկան ցուլիկը 7 ամսական, կենդ. քաշը՝ 188 կիլո



6կ. 11.
Արևշատյանի ցուլիկը, 16 ամսական, կենդ. քաշը՝ 104 կիլո
ուստուն որ շարունակ, հորթին տալիս են 2 պտուկ։ Դրանից հետո, յերբ արդեն նա խոտ ե ծամում, թողնում են

մեկ պառկ, վորից հետո, թեև ցամաք չեն կթում, բայց
մեծ մասամբ հույսները դնում են կովի «կաթը վեր քա-
շելու» վրա: Մեր վեց կովի վրա կատարած փորձերը
ցույց են տալիս, վոր կաթի վեր քաշելը կամ պահելը,
ինչպես յերկում ե, տեղի յե ունենում կթելուց առաջ,
յերբ ուզում են կթել կովի կամքին հակառակ, առանց
հորթի ներկայության: Կթելուց հետո կովը կաթ չի պա-
հում, կան կովեր, վոր բոլորովին կաթ չեն պահում վոչ
կթելուց առաջ, վոչ ել հետո: Ուրեմն այս ձեռվ առաջին
ամսվա ընթացքում հորթը ստանում ե որական 1 կ. 200
գր.՝ 1 կ. 600 գր. (3—4 ֆ.) կաթ, քանի վոր կովերի
մեծ մասը ծնում ե հունվար-մարտ ամիսներին, յերբ կե-
րը սաստիկ պակաս ե, վորի պատճառով կովերի կաթն
որական 2 կ. 800—3 կ. 200 գրամից չի անցնում. իսկ
հետո ել, մինչև խոտ ուտելուն ընտելանալը, յերեի տըր-
փում ե մոտ 80'—1200 գրամ և ապա մինչև կովի ցա-
մաքելը՝ որական 400 գրամից վոչ ավել, Յեթե ընդու-
նենք նույնիսկ, վոր առաջին ամսում հորթն որական 1
կ. 600 գր. ե ստանում, ապա այդ ամսում կստանա ըն-
դամենը 48 կիլո կաթ, յերկրորդ ամսում՝ մոտ 32 կիլո,
մնացած ամիսներին՝ մոտ 12. ական կիլո: Յեթե հորթը
ծծում ե 6 ամիս շարունակ, ապա ընդամենը նա կիմի
մոտ 128 կիլո անարատ կաթ, վորից 80 կիլո՝ առաջին
յերկու ամիսներին, իսկ 48 կիլո՝ վերջին 4 ամիսներին:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ են ասում գիտությունն ու
փորձն այդ մասին:

Ինչպես ասված ե վերեսում, հորթին հարկավոր ե կե-
րակրել կենդանի քաշի համաձայն. ծանր հորթերին պետք
ե շատ կաթ տալ, թեթևներին՝ քիչ: Գիտական փորձերը
ցույց են տվել, վոր նորածին հորթին որական պետք ե
տալ իր քաշի վեցերորդ, յորերորդ կամ ութերորդ մասի
չափ անարատ կաթ: Առաջին յերկու շաբաթներում լավ

կինի տալ վեցերորդ մասը և այնուհետև՝ յոթերորդ մա-
սը: Ութերորդն արդեն շատ քիչ կինի: Կարելի յե հենց
ակզրից մինչև վերջը կենդանի քաշի յոթերորդ մասը տալ.
այսինքն՝ յեթե հորթը կշռում ե 14 կիլո, նրան կարելի
յե տալ 2 կիլո կաթ որական: Մեր գյուղական նորածին
հորթերի մեջ պատահում են 10 կիլո 800 գրամից մինչև
19 կիլո 600 գր. քաշ ունեցող հորթեր, նայած ինչպի-
սի սնունդ են ստանում մոր արգանդում. բայց հորթը
հետզհետե մեծանում ե ու ծանրանում, ուրեմն և որորի
վրա կաթի պահանջն ել ե մեծանում: Փորձերը ցույց են
տվել, վոր մեր տեղական հորթերը, յեթե բավարար կաթ
են ստանում՝ որական 200 գրամից մինչև 600 գրամ ա-
վելանում են. դա կախված է հորթի ընդունակություն-
ներից և կաթի վորակից: Որինակի համար ընդունենք,
վոր, ստանալով բավարար քանակությամբ կաթ, հորթի
քաշն ավելանում ե առաջին շաբաթում որական 400 գր.:
Ուրեմն, 14 կիլո քաշ ունեցող հորթը մեկ շաբաթից հետո
կդառնա մոտավորապես 16 կիլո 800 գրամ, յերկու շա-
բաթից հետո՝ 19 կիլո 600 գրամ, իսկ առաջին ամսի վեր-
ջը՝ 25 կիլո 200 գրամ, յեթե, ինարկե, կաթը բավարար ե
տրվել և հորթը նույն թափով մեծացել ե բոլոր շաբաթ-
ներում: Պարզ ե, վոր այս գեպքում կաթը բավարար կը
համարվեր այն ժամանակ միայն, յեթե որական կաթի քա-
նակը բավական լիներ 400 գրամ կենդանի քաշ ավելացնելու
համար: Յենթաղբենք, վոր այդքան ավելցուկ կարողա-
նում ե առաջացնել կաթի այն քանակը, վոր հավասար ե
կենդանի քաշի՝ 1/7 մասին: Այդ գեպքում 14 կիլո քաշ
ունեցող հորթն առաջին շաբաթում կպահանջեր մոտ 2
կիլո, յերկրորդ շաբաթում՝ մոտ 2 կիլո 400 գրամ՝ 16
կիլո 800 գրամ կենդանի քաշի համար, յերրորդ շաբա-
թում՝ 2 կիլո 800 գրամ, չորրորդ շաբաթում՝ 3 կիլո 200
գր. և հինգերորդ շաբաթում՝ 3 կիլո 800 գր. կաթ որա-

կան. վերջին քանակը՝ 25 կիլո 200 գր. կենդանի քաշի համար, Հետևապես 14 կիլո քաշով ծնված հորթն առաջին ամսում (30 որ) կլմի ընդամենը 80 կիլո կաթ. նույն հաշվով 16 կիլո 800 գր. կենդանի քաշով ծնվածը կլմի մեկ ամսում 92 կիլո, իսկ 19 կիլո 600 գր. քաշով ծնվածը՝ մոտ 104 կիլո. Յեթե այս բոլորը համեմատենք այն կաթի հետ, վոր գյուղացին ե տալիս իր հորթերին առաջին ամսում, կտեսնենք վոր 14 կիլո քաշով ծնված հորթին նա տալիս ե իսկական պահանջից 32 կիլո պակաս կաթ, 16 կիլո 800 գր. քաշով ծնվածին՝ 44 կիլո (2 փ. ձ0 Փ.) պակաս, իսկ 19 կիլո 600 գր. քաշով ծնվածին՝ 56 կիլո պակաս. Պարզ ե, վոր այս գեպքում վորքան մեծ ե հորթը: այնքան ել նա ավելի կաթնազուրէ ե մնում, սնունդը պահանջից քիչ ե ստանում. ուստի չի կարողանում լավ զարգանալ, մնում ե նվազ, թույլ և մանր:

Ի հարկե, այդպես կերակրված հորթից կարգին տափար չի ստացվի:

Յերկրորդ ամսում, ինչպես հետեւում ե վերև բերված հաշիվներից, գյուղացու հորթը կտանար անկախ իր քաշից ընդամենը 32 կիլո կաթ:

Իսկ մենք ինչքան կտայինք:

Մենք կշարունակենք քաշի համաձայն տալ: 14 կիլո քաշ ունեցող հորթի քաշը յերկրորդ ամսվա սկզբում դառնում ե 25 կիլո 200 գր. ուրեմն՝ որական կտանք 3 կիլո 600 գր. այսինքն՝ հորթի կենդանի քաշի յոթերորդ մասը՝ Յեթե ուզենանք ամբողջն անարատ կաթ տալ և կաթից բացի ուրիշ բան չտալ (բացի խոտից), ինչպես գյուղացին ե տալիս, այն ժամանակ յերկրորդ ամսվա 1-ին շաբաթում կտանք ընդամենը՝ 25 կիլո 200 գր., 2-րդ շաբաթում՝ 28 կիլո, 3-րդ շաբաթում՝ 30 կիլո 800 գր. և 4-րդ շաբաթում՝ 33 կ. 600 գր., ընդամենը 2-րդ ամսում

(28 որում) կտայինք 117 կիլո 600 գր. կաթ, իսկ առաջին և յերկրորդ ամիսներում միասին կտայինք ընդամենը 197 կ. 600 գր.: Յերկրորդ ամսում մեր տված կաթը մոտ 85 կիլո 600 գրամով զյուղացու տված կաթից ավել կլինի: Այդպես ե պահանջում հորթի կանոնավոր զարգացումը: Բայց մենք շարունակ միմիայն անարատ կաթ չենք տալ, վորովհետև նախ՝ դա մեզ վրա թանկ կնսուի և յերկրորդ՝ հորթին անհրաժեշտ ե և չոր կեր ուտելը սովորեցնել: Մենք գիտենք, վոր նույնիսկ մեկ ամսից դեռ շատ շուտ կարելի յե հետզհետե անարատ կաթի մի մասը փոխարինել քաշած կաթով և յերկրորդ ամսվա կիսից հետո տալ միմիայն քաշած կաթ: Դրանից բացի մենք գիտենք նաև, վոր նույնիսկ առաջին ամսվա յերկրորդ շաբաթից հետո հորթին կարող ենք տալ կաթի հետ միասին և ուժեղ կերեր. որինակ՝ ցորենի մանր թեփ, գարու ալյուր, յեգիպտացորենի ալյուր, վարսակի ալյուր, կամ դրանց ջարդվածը և այլն:

Քչից կարելի յե սկսել և հետզհետե շատացնել և դրա հետ միասին պակասեցնել անարատ կաթի քանակը, փոխարինելով սրան մի կողմից՝ քաշած կաթով, իսկ մյուս կողմից՝ ուժեղ կերերով, և այդ ամենն այն հաշվով, վոր 2—3 ամսում կարելի լինի դադարեցնել բոլորովին կաթ տալը և կերակրել միայն ուժեղ կերերով ու խոտով:

Մըանից արգեն պարզվում ե, վոր կենդանի քաշով կաթ տալը 2—3 շաբաթից հետո խախտվում ե, քանի վոր անարատ կաթը սկսում ենք փոխարինել ուրիշ կերերով, Պարզ ե, վոր անարատ կաթին փոխարինող կերերը (քաշած կաթ, ուժեղ կերեր և այլն) պետք ե այնքան սնունդ պարունակեն, վոր կարողանան անարատ կաթի տեղը բռնել, հակառակ դեպքում հորթի պահանջը չի բարարվի և նա կմնա թույլ¹:

¹ Զորս կիրով. անարատ կաթն իր սննդարժեքով հավասար է $5^{1/2}$ կիլ. քաշած կաթի, 1 կիլ. վարսակի ալյուրի, $4/5$ կիլ. գարու ալյուրի, $1/3$ կիլ. ցորենի թեփի, 1 կիլ. բամբակի բռնապի և $3/4$ կիլ. կտայինատի բռնապի:

Մյուս կողմից ել, վորքան և ուղենանք կաթը պակասեցնել և փոխարինել ուրիշ կերերով, պետք ե իմասնք, վոր հորթերի նորմալ զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ ե նրանց խմացնել կաթի վորոշ մինիմում: Կաթի այդ նվազագույն քանակը պետք ե խմացնել հորթերին առաջին 1—2 ամսում: Յեթե հորթերն այդ նվազագույնից պակաս են ստանում, հորթերի զարգացումը կանգ ե առնում: Ամերիկական և ոռուսական ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր կաթի այդ քանակը նրանց տավարի ցեղերի համար մոտենում է 80—96 կիլ. անարատ կաթին:

Սակայն, յերբեք ձեռնտու չե հորթերին տալ կաթի անպայման նվազագույն քանակը, վորովհետեւ հաճախ դա չի բավարարում հորթերի կատարյալ զարգացմանը: Այդ պատճառով, մի կողմից ղեկավարվելով նվազագույն քանակով, միաժամանակ անհրաժեշտ ե այնքան առատ կաթ տալ, վոր միանդամայն ապահովի հորթերի լիակատար և կանոնավոր զարգացումը: (Տես «Կաթի նորմաները» գլուխը):

Այդ իմանալով, մենք կարող ենք մեր որինակում բերած 2-րդ ամսվա անարատ կաթը հետևյալ կերպ փոխարինել ուրիշ կերերով: Յերկրորդ ամսի առաջին շաբաթից (կարող ենք և առաջին ամսի 3-րդ շաբաթից սկսել) առաջին որը՝ փոխանակ 3 կ. 800 գր. անարատ կաթ տալու, տալիս ենք 3 կիլո 200 գր. անարատ կաթ և 400 գր. քաշած կաթ և ամեն որ փոխարինում ենք մեկ փունտ անարատ կաթը մեկ փունտ քաշած կաթով, այնպես՝ վոր իններորդ որը տալիս ենք 3 կիլո 600 գր. քաշած կաթ: Քաշած կաթը տալիս ենք մինչև 2-րդ ամսի վերջը, բայց 2-րդ ամսի 2-րդ շաբաթվա սկզբից սկսում ենք սրեցոր պակասեցնել, մոտավորապես, որական 200 գրամով և յերկրորդ ամսի վերջը հորթին բոլորովին կաթից կտրում

ենք: Բայց մենակ այդ չենք անում: Այն վայրկյանից յերբ սկսում ենք բաւած կաթ տալ, դրա հետ միասին բակրսում ենք տալ յեվ ուժեղ կերեր (այսինքն՝ թեփ, դարու ալյուր, լավ մաղած վարսակ), վորպեսզի համ անարատ կաթի տեղը բռնեն, համ ել հորթը կամաց կամաց սսվորի այդ տեսակ կերեր ուտել ու մարսել, և յերկրորդ ամսվա վերջին այնքան սովորած լինի գրանց, վոր կարողանա բոլորովին առանց կաթի ապրել: Իհարկե, կարող ենք կաթ տալը շարունակել և մինչև յերրորդ ամսը վա վերջը, յեթե քաշած կաթ շատ ունենք: Այստեղ 2 ամսուր միայն որինակի համար ե բերված, իբրև կաթ տալու նվազագույն ժամանակամիջոց, Յեթե գարու ալյուր ունենք, այլուրը կարգին մազում ենք, ջրով բաց ենք անում ու տալիս ենք, վոր հորթը խմի: Ակզեռմ տակիս ենք 20—25 գրամ, հետո քիչ-քիչ ավելացնելով, յերկրորդ ամսվա վերջին հասցնում ենք որական 600—800 գր.: Գարու ալյուրի փոխարեն կարելի յե տալ և ջարդված յեզիպտացորեն, կամ վարսակի ալյուր, կամ ցորենի թեփ. բայց ամենից լավի ե, յերբ մենք դրանցից յերկումն ունենք և խառնում ենք ու տալիս հորթին: Որինակ՝ յեթե ալյուրից բացի թեփ ել ունենք, այն ժամանակ հարկավոր ե կեսը թեփից տալ (լավ աղած), կեսը՝ գարու ալյուրից (խառնել), բայց թեփը պետք ե յեփել (մինչև հորթի կադդուրվելը, պնդվելը):

Կերի մի մասը կամ ամբողջը կարելի յե տալ և առանց լափ շինելու, ուղղակի չոր վիճակում, կարելի յե և ջրով թաց անել, վոր ուտելիս ալյուրի և թեփի փոշին քթածակերը չեցվեն:

Այդպիսով, մեր բերած որինակի համաձայն, ամբողջ յերկրորդ ամսում՝ 117 կիլո 600 գր. անարատ կաթի փոխարեն հորթը կստանա:

ա) անարատ կաթ մոտ 14 կիլո 400 գրամ.

բ) քաշած կաթ մոտ 68 կիլո 400 գրամ

գ) ցորենի թեփ մոտ 5 կիլո 600 գրամ

դ) գարու ալյուր մոտ 5 կիլո 600 գրամ:

Իսկ խոտն իր կամքով վորքան կուղենա կուտի, թեև այդ հասակում շատ խոտ չի կարող ուտել:

Յերբ համեմատում ենք գյուղացու առաջին յերկու ամսում տված կաթը 14 կիլո քաշ ունեցող հորթին, մեր տվածի հետ ստանում ենք հետեւյալ պատկերը.—

	Գյուղացին տալիս և (2 ամսում)	Մենք ավեցինք (2 ամսում)
Անարատ կաթ . . .	80 կիլո	94 կ. 400 գ.
Քաշած կաթ . . .	—	68 կ. 400 գ.
Ցորենի թեփ . . .	—	5 կ. 600 գ.
Գարու ալյուր . . .	—	5 կ. 600 գ.
Խոտ	Քիչ	Քիչ

Բայց մենք սրանով վերջացնում ենք կաթ տալն, իսկ գյուղացին 2-րդ ամսի վերջից մինչև կոփի ցամաքեւ, դեռ շարունակում է ծծացնելով նրան կաթ տալ՝ մոտ 48 կիլո անարատ կաթ, վորը հորթի զարդացման վրա այնքան ել ազգեցություն չի կարող ունենալ, վորովհետեւ որական շատ չնչին քանակությամբ ե տրվում և վոչ ժամանակին:

Իսկ յեթե դա տրվեր առաջին յերկու ամիսներում, ազգեցությունը կլիներ մեծ, թեև գարձյալ թանկ կնսաեր գյուղացու վրա, վորովհետեւ գյուղացին փաստորեն կիրացներ 128 կիլո անարատ կաթ, մինչդեռ մենք միայն 94 կիլո յենք խմեցրել: Յեթե 16 կիլոն 2 ոռոբլի հաշվենք, գյուղացու խմեցրած անարատ կաթը կնսաի 16 ոռոբլի, մերը՝ 11 ո. 80 կ.—տարբերությունը՝ 4 ո. 20 կ.:

Դրանից բացի, մենք տալիս ենք 68 կիլո քաշած կաթ, վոր կարժենա մոտ 1 ո. և 11 կիլո 200 գրամ ուժեղ կեր 50 կ., վորը քաշած կաթի արժեքի հետ կկազմի 1 ո. 50 կ.: Ուրեմն՝ ընդամենը մենք ծախսում ենք մոտ 13 ո. 30 կ., իսկ գյուղացին՝ 16 ո.: Բայց գլխավորն եժանության մեջ չե, այլ թե ինչպես ե ազգում հորթի զարդացման վրա տված կերը:

Մեր տված կերը, բացի եժան լինելուց, միաժամանակ և միանգամայն բավարար ե հորթի նորմալ զարգացման համար, վորովհետեւ ժամանակին ե տրվում և պահանջի համեմատ: Իսկ գյուղացու տված կաթը նույն ազգեցությունը չունի: Ինչնու: Ամփոփենք:

1. Վորովհետեւ գյուղացին հաշվի չի առնում հորթի պահանջը, նրա կենդանի քաշը, և մեծանալու հետ կաթը չի ավելացնում:

2. Ամբողջ կաթը չի տալիս այն ամիսներում, յերբ դա անհրաժեշտ ե. այսինքն՝ առաջին յերկու ամիսներում: Այդ ամիսներում, փոխանակ առատ կաթ ստանալու, հորթը մշտապես սոված ե մնում: Ամբողջ ծծած կաթի համարյա կեսը, հետագա ամիսների վրա ցըլսիծ լինելու պատճառով, իզուր տեղը կորչում ե: Բավարար քանակությամբ կաթ տալուց բացի, պետք ե իմանալ նաև թե այդ կաթը յերբ ե. հարկավոր տալ: Գյուղացին այդ չգիտե և դրանից շատ ե վնասվում:

3. Գյուղացին վնասվում ե և նրանից, վոր անարատ կաթը չի փոխարինում քաշած կաթով և ուժեղ կերերով, վորոնք անհամեմատ ավելի աժան են նստում գյուղացու վրա, քան անարատ կաթը և տալիս են բավարար արդյունք, յերբ փոխարինումը կատարվում ե ժամանակին և աստիճանաբար:

Բ. ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԿԱՅ ՏԱԼՈՒ
ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Նոր ծնված հորթին պետք է կշռել և ծնվելու յերրորդ օրից կաթը սկսել տալ քաշի համաձայն։ Ամեն շրբաթ հարկավոր ե նորից կշռել և ավելացած քաշի համեմատ ավելացնել և կաթի քանակը։ Պետք ե միշտ հիշել, վոր ամենաարագ մեծանալու շրջանը առաջին շաբաթներն են և, ընդհանրապես, առաջին յերկու ամիսները, և այդ պատճառով այդ շրջանում հորթը պետք ե առատորեն կաթ ստանա։

2. Լավ կլինի առաջին 2 շաբաթում հորթին կաթ տալ քաշի $\frac{1}{6}$ մասի չափ, իսկ յերրորդ շրբաթից սկսած տալ $\frac{1}{7}$ մասը, թեև կարելի յե հենց սկզբից տալ և $\frac{1}{7}$ -ի չափ։

3. Հորթին հարկավոր ե կաթ խմացնել ամանից և թույլ չտալ վոր մորը ծծի (տես գլուխ 5)։

4. Առաջին յերկու շաբաթում պետք ե տալ միայն մոր կաթը, վորն ավելի հարազատ ե նրան և լավ և սարսպում։ Յերկու շաբաթից հետո կարելի յե և ուրիշ կովերի կաթից տալ։ Մոր հիվանդության դեպքում, իհարկե, կարելի յե տալ և ուրիշ կովերի կաթից նույնիսկ առաջին շաբաթում։

5. Հորթին պետք ե կաթ տալ իսկույն կթելուց հետո, վորպեսդի կաթը չսառչի։ Սառած կաթը հարկավոր ե մեղմ կրակի վրա տաքացնել, վոր գոլանա և նոր կթված կաթի տաքությունն ընդունի։ Սառը կամ շատ տաք կաթից հորթը կարող ե փորացավով հիվանդանալ։

6. Ամբողջ կաթնային շրջանում պետք ե կաթ տաք առնվազն որական 3 անգամ։ Նույնքան անգամ ել կարելի յե կովին կթել, յեթե լավ ե կերակրվում և շատ կաթնառատ ե, հակառակ դեպքում առավոտյան կաթից պետք ե պահել և ճաշին տալ։

7. Կաթը պետք ե պահել մաքուր ամանի մեջ և սառը տեղում, վոր չթթվի, թթված կաթ հորթին պիտի տալ։

8. Հորթերին չի կարելի խմացնել հիվանդ կովերի կաթ։

9. Կաթ խմացնելիս չպետք ե թույլ տալ, վոր հորթերը միանգամից, մի շնչում խմեն, այլ պետք ե ընդհատումներով խմացնել, վոր կաթը լավ մարսեն։

10. Յերկրորդ շաբաթից հետո կարելի յե անարատ կաթի հետ տալ և քաշած կաթ, ավելացնելով միաժամանակ յերկուսի քանակն ել։ Քաշած կաթը պետք ե անպայման յեռացնել և ապա հովացնել, վոր նոր կթած կաթի ջերմությունն ընդունի, և անարատ կաթի հետ խառը տալ։

11. Քաշած կաթն անարատ կաթին հարկավոր ե ավելացնել քիչ-քիչ և աստիճանաբար։

12. Չորրորդ շաբաթի սկզբից կարելի յե սկսել անարատ կաթը փոխարինել քաշած կաթով, պակսեցնելով անարատը և ավելացնելով քաշածն որական 400 գրամից վոշ ավել։

13. Անարատ կաթը պակսեցնելու ըոսկեյից պետք ե սկսել տալ ուժեղ կերեր, սկզբում՝ քիչ, և հետո պետք ե ասածիճանաբար ավելացնել։ Ուժեղ կերերը կարելի յե տալ և առանց սպասելու անարատ կաթի պակսեցնելուն։ Այդ արվում ե այն դեպքերում, յերբ քաշած կաթ չունենք և դրա փոխարեն անարատ կաթին ուղում ենք ավելացնել ուժեղ կերեր։ Այդ կարելի յե անել չորրորդ շրբաթվա սկզբից։

14. Շատերը խորհուրդ են տալիս ուժեղ կերերը սկզբնական շրջանում տալ ջրալի լափի ձևով (շորփա), վոր հորթը խմի։ Զարդած կամ աղած կերերը պետք ե լավ մաղել, բաց անել յեռող ջրի մեջ, քամել մաղով և պուլ վոր հորթը խմի։

Յերբեմն քաշած կաթի հետ տալիս են կտավհատի

սերմ յուղի պակասը լրացնելու համար, և այդ գեպօւմ պետք ե կտավահատի սերմն անպայման ջարդել և յեփել, շորվա շինել ու խմացնել կամ առանձին կամ մյուս կերերի հետ միասին:

15. Պետք ե աշխատել շորվան հետզհետե փոխարինել չոր կերով, վորպեսզի կաթի շրջանն անցնելուց հետո (2^{1/2} ամիս) հորթը միայն չոր կեր ուտի և խմելիքը լինի ջուրը:

16. Պետք ե իմանալ, վոր հորթերին կարելի յե և հենց սկզբից սովորեցնել վորպեսզի ուժեղ կերերը չոր վիճակում ուտենս: Այդ նույնիսկ անհրաժեշտ ե անել, վորովհետե այդ ձեռվ ուժեղ կերն ավելի լավ ե մարսվում, քան շորվայի ձեռվ տալու դեպքում: Միայն այս դեպքում հարկավոր ե, գոնե տուաջին ամսումը, աննշան կերպով թաց անել կաթով կամ մաքուր ջրով, վոր հորթը հեշտ ծամի և փոշին քթածակերը չլցվի:

17. Պետք ե աշխատել ուժեղ կերերից ունենալ գոնե յերկուսը. վորովհետե մենակ մեկը ցանկացած աղդեցությունը չի թողնում հորթերի զարգացման վրա: Որինակ՝ լավ ե գարու ալյուրը վարսակի հետ տալ, կամ թեփը՝ գարու ալյուրի կամ յեղիպտացորենի հետ: Իսկ ավելի լավ ե, վոր կերը տրվի յերեքից խառը (որինակ՝ թեփը, վարսակը և գարու ալյուրը միասին):

18. Ինչպես ասել ենք, ուժեղ կերեր տալը պետք ե սկսել քչից. որինակ՝ որական 20—25 գրամից վոչ ավել: Ահունհետե հարկավոր ե որական մոտ 5—10 գրամ ավելացնել այն հաշվով, վոր կաթից կտրելու ժամանակ ուժեղ կերերի ընդհանուր քանակը լինի 600—800 գրամից մինչև 1 կիլո: Կտավհատի սերմը կարելի յե սկսել 5 գրամից, բայց հետագայում 100 գրամից ավել չպիտի տալ, թե չե փորը կարող ե լուծել:

19. Ամեն անգամ հորթին պետք ե այնքան կեր տալ,

ովոր առանց թերմացքի ուտի, իսկ ջուրը՝ վորքան ուզենա: Յեթե ուտելուց հետո մնացորդ ե մնում, պետք ե դեն ածել:

20. Յերբ կաթի քանակն սկսում ենք պակսեցնել, կամ յերբ կաթին ավելացնում ենք ուժեղ կերեր, հարկավոր ե հորթին ջուր տալ: Ջուրը կարելի յե տալ և ավելի շուտ, միայն նա պետք ե լինի միանգամայն մաքուր, և յեթե աղբյուրի չե, պետք ե յեռացնել ու գոլ վիճակում խմացնել: Զրի տաքությունը պետք ե նոր կթված կաթի տաքությունն ունենա:

21. Յերբորդ շաբթից պետք ե տալ և քիչ չոր իոտա: Խոտը պետք ե մաքուր, քնքուշ լինի: Փշեր չպիտի ունենա և վոչ ել պետք ե բորբոսնած, հոտած և փոշոտ լինի: Հորթը հետզհետե սովորում ե խոտ ուտելուն: Լավ ե, յեթե խոտի հետ յոնջա լինի խառը: Հորթը խոտին աստիճանաբար ե սովորում, պետք ե թույլ տալ, վոր ուտի վորքան կարող ե:

22. Քուսպը դժվարամարս ե. լավ ե կաթնային շրջանում հորթին քուսպ չտալ: Լավ ե տալ միայն կտավհատի քուսպ:

Գյուղական կտվահատի քուսպը շատ յուղալի յե, հորթին կարող ե վնասել, ավելի լավ ե տալ մոռւսաստանից բերած կտավհատի քուսպ: Պետք ե խուսափել առաջին շամսումը բամբակի քուսպ տալուց: Քուսպը պետք ե ջարդել, և չոր վիճակում կերցնել հորթերին: Հորթին մենակ քուսպ չի կարելի տալ, այլ մյուս ուժեղ կերերի հետ խառը: այն ել այն հաշվով, վոր ամբողջ քուսպը ուժեղ կերաբաժնի մեկ ութերորդական մասից շատ չլինի:

23. Առաջին շաբթից պետք ե սկսել տալ աղ մոտ 1/4 թեյի գդալ որական՝ կաթի, չոր կերի կամ լափի մեջ: Հետզհետե աղի քանակը պետք ե ավելացնել:

24. Կերի կամ կաթի հետ խառը պետք ե տալ նաև լավ ջարդած և փոշի գարձրուծ մաքուր կավիճ, սկզբում ^{1/3} թեյի գղալ, բայց հետո պետք ե հասցնել որակտն մինչև 2—3 թեյի գղալ ($1^{1/2}$ ամսական հասակում):

25. Կաթ տալը պետք ե շարունակել առնվազն շամիս: Ով հնարավորություն ունի քաշած կաթ տալու, լավ ե շարունակել մինչև 3— $3^{1/2}$ ամիս: Ով հնարավորություն չունի, կարելի յե կաթից կտրել 2— $2^{1/2}$ ամսում: Հորթին յերկար և շատ կաթ տալը կախված ե և նրանից թե հորթին ուզում ենք պահել—մեծացնել, թե ծախել: Առաջին գեպքում կաթը պետք ե ավելի առատ տալ ու խմացնել յերկար ժամանակ, իսկ յերկրորդ գեպքում կարելի յե հասցնել նվազագույն չափի՝ կաթը փոխարինելով ուժեղ կերերով:

26. Յեթե տնտեսության մեջ քաշած կաթ չկա և ստիպված ենք տալ միմիայն անարատ կաթ, այս գեպքում պետք ե խմացնել առնվազն 106 կիլո կաթ, (ընդամենը, 2 ամսում): Իսկ միանգամայն բավարար կարելի յե համարել 128—160 կիլո անարատ կաթը, նայած հորթի մեծությանը և տիրոջ նպատակներին, Այս քանակից ավել մեր տեղական հորթերին կարելի յե և չառալ, յեթե, իհարկե, հնարավորություն կա հորթերին բավականաշափ ուժեղ կեր տալու, հակառակ դեպքում պետք ե շարունակել և 128—160 կիլոյից ավել տալ:

27. Ով իր արամագրության տակ բավականին քաշած կաթ ունի, կարելի յե անարատ կաթի քանակը պակացնել՝ հասցնելով մինչև 80 կիլոյի և ավելացնել դրան 128—160 կիլո քաշած կաթ (տես. «կաթի նորմաները» գ. յենթագլուխը):

28. Հորթին անհրաժեշտ կաթով բավարարելու հնարավորությունը կախված ե և կովի կաթնառատությունից, իսկ վերջինը՝ կովի ստացած կերից: Դրա հա-

մար ել ծնելուց առնվազն մեկ ամիս առաջ և ծնելուց հետո շարունակ կովին պետք ե լավ կերակրել այսինքն՝ խոտից և դարմանից բացի տալ նաև քուսպ, թեփ և այլ ուժեղ կերեր, յեթե կանույնպես ճակնդեղ (ծնելուց հետո): Ուժեղ կերով և ճակնդեղով կերակրած կթի կովերն այնքան կաթ են տալիս, վոր հորթին ել և բավական, տիրոջն ել:

29. Ամեն անգամ պետք ե հսկել հորթի վրա, թե ինչպես ե նա ուտում, խմում, ինչպես ե նրա տրամադրությունը: Յեթե քեֆը լավ չե, պետք ե աշխատել կտնել պատճառներն ու վերացնել: Ամեն մի հորթ ունի իր հակումներն ու հատկությունները: Մեկը ջրալի կեր ե սիրում, մյուսը՝ չոր, մեկը լավ ե մարսում և շուտ աճում, մյուսը՝ վատ և ուշ: Այդ բոլորի վրա պետք ե հսկել և ուղղել նկատած սխալները, փոխել կերաբաժինը, ավելացնել կամ պակասացնել:

Ինչ վոր այստեղ ասված ե—դրանցով հորթատերը պետք ե գիտակցորեն ղեկավարվի, և վոչ թե մեքենայութեն կատարի:

Գ. ԿԱԹԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ներքեւում բերած նորմաները կազմել եմ մեր տեղական տավարի պոհանջները, նրա աճման թափը և մեր գյուղական պայմաններն ի նկատի ունենալով: Այս նորմաները կաթով կերակրելու սխեմաներն են միայն, վորոնց կուրորեն չպիտի գործածել, այլ ամեն մի հանգամանք խորը կշռագատելով:

Մասնավորապես նկատի յեմ ունեցել ծնված հորթի մեծությունը (քաշը), դրա համար առաջարկում եմ կաթի փոքր, միջակ և մեծ նորմաներ, համապատասխան տարբեր քաշ ունեցող հորթերի կարիքներին: Մյուս կողմից

հաշվի յեմ առել և տնտեսական տարբեր պայմանները՝ յերբ մի տեղ հնարավոր ե լինում քաշած կաթ ճարել՝ մյուս տեղ՝ վոչ, մի տեղ գերադասելի յե լինում անարատ կաթով կերակրել, մյուս տեղը՝ ընդհակառակը. Այդ տեսակետից շատ բնորոշ են և տարբեր պահանջներ են դնում պահագործական և յուղագործական տնտեսությունները. Այդ յերկուսի պահանջներն ել նկատի յեն առնված:

Ամեն մի նորմա արժեքավոր ե այն չափով, վոր չափով նա հեշտությամբ կարող ե գործադրվել մասսայի կողմից: Նորմաները կազմելիս այդ հանգամանքը նույնպես աշքի առաջ եմ ունեցել:

Նորմաներում բերած կաթի քանակը անհրաժեշտ չեանպայման նույնությամբ դասավորել շաբաթներում: Դասավորումը կարելի յե միշտ յետ ու առաջ տանել, պակասեցնել կամ շատացնել կաթի քանակը, սակայն պետք ե հիշել միշտ, վոր հորթին ամենասուատ կերպով պետք ե կաթ տալ 2,3 և 4 շաբաթներում:

Պահագործների համար առաջարկում եմ 3 նորմա. առաջինը՝ 106 կիլո անարատ կաթ, յերկրորդը՝ 128 կիլո, յերրորդը՝ 160 կիլո: Յեթե հիշենք, վոր մեր գյուղացիք միջին թվով նույնքան կաթ (գուցե և ավելի) կերցնում են հորթերին ամբողջ տարին ծծացնելով, կտեսնենք, վոր ամեն մի գյուղացի հեշտությամբ կարող ե այս նորմաները լրիվ գործադրել: Ինչ վերաբերում ե այն հարցին, թե, արդյոք, այդ նորմաները չափազանց քիչ չեն, պետք ե հիշել, վոր ամերիկական և ոռուսական բազմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր նույնիսկ մեծցեղերի հորթերին կարելի յե տալ 80—96 կիլո կաթ ընդումենը) և ստանալ բավարար հետեւանք, միայն յեթե ամբողջ կաթը գործածվի առաջին $1\frac{1}{2}$ —2 ամսում և վոչ թե 6—7 ամիսներում, ինչպես մեր գյուղացիք են ա-

նում, և, իհարկե, յեթե միաժամանակ տրվի և բավականաչափ ուժեղ կեր:

Այնպես վոր տեղական ցեղի հորթերի համար այդ 3 նորմաները կարելի յե առայժմ համարել բավական, նկատի ունենալով մեր հորթերի կենդանի քաշերը և սրանց հնարավոր տատանումները: Մասսայական փորձերին ե մնում ստուգել այդ նորմաների ազդեցությունը և մտցնել դրանց մեջ այս կամ այն փոփոխությունները:

Յուղագործական շրջանի համար, վորտեղ քաշած կաթ միշտ կարելի յե ճարել, առաջարկում եմ 2 նորմա. առաջինը կազմված ե 80 կիլո անարատ կաթից և 128 կիլո քաշած կաթից. իսկ յերկրորդը՝ 80 կիլո անարատ կաթից և 160 կիլո քաշած կաթից: Վորովհետեւ քաշած կաթը տնտեսության համար առանձին գին չունի, զրա համար ել նրա քանակը բարձր ե վերցրած, նկատի ունենալով վոր նա միաժամանակ հորթերի զարգանալու և աճելու համար հարշալի կեր ե հանդիսանում: Դրա համար ել ով կարող ե, թող այս նորմաներում ցույց տված քանակից ավել քաշած կաթ տա իր հորթերին:

Պահագործական շրջաններում, վորտեղ սերդաստ կա. մանավանդ կաթնարտելներում, միշտ ել հնարավոր ե կաթի մի ժամը սերգատել և քաշած կաթը վերադարձնել հորթատիրոջը: Միայն այս կաթը հորթերին տալուց առաջ հարկավոր ե յեռացնել կամ պաստերիկացիայի յենթարկել:

Մեր կաթնարտելները յեթե այս հարմարությունը կարողանան ստեղծել, մեծ զարկ տված կլինեն հորթերի կանոնավոր կերակրման և զարգացման գործին:

Յերկու խոսք ել ասենք նորմաներն ոգտագործելու կարգի մասին: Պետք ե աշխատել նորմաներում բերած

Կաթի քանակը տալ 2 $2^{1/2}$ ամսում, ճշտությամբ հետեւելով կերակրման կանոններին. Մենք այստեղ ցույց ենք տալիս կաթի այն քանակը, վոր մատավորապես հարկավոր ե տալ հորթին յուրաքանչյուր շաբթում (7 որում): Շաբաթվա մեջ բաժանելը կկատարի ինքը հորթատերը: Միայն պետք ե հիշել վոր շաբաթվա վերջը միշտ կարելի յե ավելի շատ տալ, քան նույն շաբաթվա սկզբում, բայց կարելի: յե և ամբողջ շաբաթվա կաթը 7 որվա մեջ հավասար մասերի բաժանել:

Կաթի քանակի նկատմամբ շաբաթների մեջ ել կարելի յե փոփոխություն մտցնել, բայց շաբաթից շաբաթ ավելացնելու և պակացնելու ընդհանուր սխեման, վոր բերված ե նորմաներում, լավ կլինի շատ չխախտել:

I. Անարա կարի նորմաներ

ԳԵՏՔ Ե ՏԱԼ	№ 1 ՆՈՐՄԱ-ՆԵՐԸ			№ 2 ՆՈՐՄԱ-ՆԵՐԸ			№ 3 ՆՈՐՄԱ-ՆԵՐԸ		
	106 կիլո	128 կիլո	160 կիլո	106 կիլո	128 կիլո	160 կիլո	106 կիլո	128 կիլո	160 կիլո
Առաջին շաբթում . . .	13 կիլո	13 կիլո	15 կիլո	13 կիլո	13 կիլո	—	13 կիլո	—	—
Յերկրորդ . . .	15 »	20 »	22 »	20 »	20 »	—	22 »	—	—
Յերրորդ . . .	17 »	20 »	25 »	20 »	20 »	—	15 կիլո	15 կիլո	—
Չորրորդ . . .	16 »	22 »	25 »	16 »	16 »	—	13 »	13 »	20 »
Հինգերորդ . . .	14 »	19 »	19 »	14 »	14 »	—	12 »	16 »	10 »
Վեցերորդ . . .	10 »	14 »	16 »	10 »	10 »	—	—	7 »	28 »
Յոթերորդ . . .	8 »	9 »	14 »	8 »	9 »	—	20 »	—	25 »
Ութերորդ . . .	7 »	7 »	10 »	7 »	7 »	—	20 »	—	19 »
Իններորդ . . .	6 »	4 »	8 »	6 »	4 »	—	15 »	—	13 »
Տասերորդ . . .	—	—	6 »	—	—	—	10 »	—	8 »
Հասներորդ շբթի առաջին որից սկսած տալ ուժեղ կեր:	106 կիլո	128 կիլո	160 կիլո	106 կիլո	128 կիլո	160 կիլո	106 կիլո	128 կիլո	160 կիլո
Հասներորդ շբթի առաջին որից սկսում ենք տալ քաշած կաթի: Չորրորդ շբթի առաջին որից սկսում ենք տալ ուժեղ կերեր:	—	—	—	—	—	—	—	—	—

Չորրորդ շբթի առաջին որից սկսած տալ ուժեղ կեր: Առաջին որին ուժեղ կերի ամբողջ քանակը

կարող ե լինել 20—25 գրամ, այնուհետեւ դրան պետք ե ավելացնել որական 5—10 գրամ, նայած հորթի մարսելու կարողությանը:

Իններորդ շաբաթվա վերջն ուժեղ կերի քանակը կարող ե հասնել 600—800 գրամից մինչև 1 կիլո նայած հորթին:

Խոտ պետք ե տալ յերրորդ շաբաթվա սկզբից քիչ-քիչ. հետո տալ վորքան հորթը կուտի:

II. Նորմաներ բաշխման կարով

ԳԵՏՔ Ե ՏԱԼ	№ 1 ՆՈՐՄԱ-ՆԵՐԸ		№ 2 ՆՈՐՄԱ-ՆԵՐԸ	
	Անարա կաթ 80 կիլո	Քաշած կաթ 128 կիլո	Անարա կաթ 80 կիլո	Քաշած կաթ 160 կիլո
Առաջին շաբթ	13 կիլո	—	13 կիլո	—
Յերկրորդ	20 »	—	22 »	—
Յերրորդ	14 »	13 կիլո	15 »	15 կիլո
Չորրորդ	13 »	14 »	13 »	20 »
Հինգերորդ	12 »	16 »	10 »	25 »
Վեցերորդ	—	20 »	7 »	28 »
Յոթերորդ	—	20 »	—	25 »
Ութերորդ	—	20 »	—	19 »
Իններորդ	—	15 »	—	13 »
Տասերորդ	—	10 »	—	8 »
Տասնմեկերորդ շբթի առաջին որից սկսում ենք տալ քաշած կաթի:	—	—	—	7 »
Հասներորդ շբթի առաջին որից սկսում ենք տալ քաշած կաթի:	80 կիլո	128 կիլո	80 կիլո	160 կիլո

Յերրորդ շաբթի առաջին որից սկսում ենք տալ քաշած կաթի: Չորրորդ շաբթի առաջին որից սկսում ենք տալ ուժեղ կերեր:

Խոտ կարգով և չափով, ինչպես տրվում ե անարա կաթի նորմաները կիրառելու դեպքում: Խոտնը վերաբերում ե և խոտին:

Դ. Ի՞նՉՊԵՍ ԹԵՏՔ Ե ԿԵՐԱԿՐԵԼ ՀՈՐԹԻՆ
ԿԱԹԻՑ ԿՏՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Կաթից կտրելուց առաջ հորթը պետք է այնպես ընտելացած լինի ուժեղ կերերին, վոր առանց կաթի կարողանա այդ կերերը լավ մարսել: Բացի գրանից նա պետք է ընտելացած լինի և խոտին: Մյուս կողմից՝ պետք է աշխատել, վոր հորթն ուժեղ կերերը կարողանա ուտել չոր վիճակում, այնպես վոր կաթից կտրելու որից նա այլևս լափ չխմի, նրա միակ խմելիքը լինի ջուրը:

Յեթե անցրալ գլուխներում բերած բնլոր խորհուրդները ճշտությամբ կատարվեն, հորթերն արդեն այդ բոլորին ընտելացած կլինեն:

Պետք ե հորթին շարունակել տալ ուժեղ կերեր, հետզհետե շատացնելով դրանց քանակը այն հաշվով, վոր 3—4 ամսական հասակում որական մոտ 1 կիլո 200 գրամ ուժեղ կեր ստանան: Հորթերին կերակրելու գաղտնիքներից մեկն ել այն ե, վոր նրանք սովորեն ապագայում լավ մարսել խոտն ու դարձանը, թեև դարձանը 7—8 ամսից շուտ չպիտի տալ, իսկ դրանց լավ մարսելու համար հարկավոր ե ուժեղ կերեր տալ, վորովհետև վերջինները շատ են նպաստում խոտի և դարձանի մարսվելուն: Վորձերին ուժեղ կեր ավելի շատ պետք ե տալ քան եղերին:

Մեկ տարեկան հասակից հետո ավելի լավ ե վարսակ չտալ, վորովհետև նա գրգռում ե և հորթերը դրահետեանքով վաղաժամ են արբունքի հասնում, վորը բոլորովին ցանկալի չե: Այդ շրջանում կարելի յե տալ խառը քուսպ, թեփ և ջարդած լեզվատացորեն կամ գարի:

Արոտի ժամանակ պետք ե յերեկոները և առավտաներն ուժեղ կեր տալ մանավանդ այն ժամանակ, յերբ հորթերը հանդում չեն կշտանում:

Պետք ե հսկել հորթի ախորժակի վրա և ընդառաջ

գնալ նրա պահանջներին: Շաբաթը մեկ անգամ հարկավոր ե կշռել և ստուգել, թե հորթի քաշն ավելանում է թե վոչ: Յեթե չի ավելանում, ուրեմն կամ կերն ե պակաս, կամ առողջությունը տեղը չի: Պատճառը պետք է վերացնել:

Աճող կենդանիներին կերակրելու նկատմամբ դեռ վերջնական կանոններ չեն մշակված: Ամենահիմնականը տիրոջ աչքն ե, նա պետք ե ուշի ուշով դիտե իր կենդանուն և անհրաժեշտ ուժեղ կերով և խոտով ապահովի նրա կանոնավոր զարգացումը:

Պետք ե հիշել վոր լավ կերակրվող հորթը մինչեւ մոտ 2 տարեկան հասակն որական ավելանում ե 200—400 գրամ:

Յեթե այդքան չի ավելանում, ուրեմն պետք ե ավելացնել ուժեղ կերի քանակը՝ վորձելու համար, թե հորթն ավելանալու ընդունակություն ունի, թե վոչ:

Իբրև կանոն պետք ե հիշել, վոր ցուլացուներին անհրաժեշտ ե ավելի առատ կերակրել, քան յեզնացուներին ու եգերին: Վերջինների կերը կարող ե լինել միատեսակ:

Յերինջներին 2¹/₂ տարեկանից շուտ չպիտի ծածկել վորովհետև վաղաժամ բեղմնավորումն ու ծնելը շատ վատ կազդի նրա հետագա զարգացման և մանավանդ կաթնատվության վրա:

Յուլերի նկատմամբ ել պետք ե լինել զգույշ: Նայած նրանց ընդհանուր զարգացմանը՝ 2—2¹/₂ տարեկանից շուտ չպիտի գործադրել:

Շատ ոգտակար ե ցուլերին սովորեցնել թեթև աշխատանքներ կատարել:

7. ՀՈՐԹԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Խնդիրներ յեվ առաջարություններ

1. Զեր խմբակի անդամների հորթերի նկատմամբ կատարեցեք հետևյալ փորձը. վորոշ հորթերին տվեք կաթ, վորը հավասար լինի հորթի կենդանի քաշի՝ $\frac{1}{6}$ մասին, միուսներին՝ $\frac{1}{7}$ և վորոշ հորթերին ել՝ $\frac{1}{8}$, իսկ մի խումբ հորթերի կաթ տը-վեք մորը ծծեցնելով, ինչպես զյուղացիք են անում, Այդպես շարունակեցեք 1 ամիս, ամեն որ հշուելով և չափելով հորթերը և գրի անցկացնելով տվյալները Տվյալներից կաղ-մեցեք համեմատական դիագրամմա: (Կաթի քանակը, կեն-դանի քաշը, յերկարությունն ու բարձրությունը):
2. Այդ հորթերին դիագրամմաների հետ տարեք ձեր շրջանային ցուցահանդեսը, իսկ դրանց նկարները և դիագրամմաներն ուղարկեցեք «Մաճկալ» թերթին տպագրելու համար:
3. Այս կատարած փորձերի մասին զեկուցում կարդացեք ձեր գյուղի կանանց ժողովում:
4. Հայտարարեցեք ձեր գյուղում հորթերի ուսցիոնալ կերակը-ման մրցում:
5. Յեթե ձեր գյուղում կաթնարտել չկա, աշխատեցեք վոր ձեր խմբակը վարկային ընկերության միջոցով ձեռք բերի սեպարատոր (սերզատ)՝ կաթի մի մասը սերզատելու և հոր-թերին անարատ կաթից բացի և քաշած կաթ տալու հա-մար:
6. Յեթե ձեր գյուղում կաթնարտել կա և դուք բոլորդ անդամ եք նրան, ընդհանուր ժողովում փորոշում կայացրեք, վոր կաթի մի մասը սերզատով անցկացնեն և վերադարձնեն հորթատերերին հորթերին քաշած կաթ խմացնելու համար:
7. Այս գլխում բերած նորմաների աղդեցությունն ստու-գելու համար հորթերի մի մասը կերակրեք մի նորմա-յով, մյուսները՝ մյուս նորմաներով և համեմատեցեք արդ-յունքները, կազմելով համապատասխան դիագրամմաներ: Արդյունքների մասին հայտնեցեք «Մաճկալ» թերթին տը-պագրելու համար և միաժամանակ այս գրքույկի հեղինա-կին—Պետ. համալսարան:
8. Հորթերին կերակրելու համար նախապես պատրաստեցեք բո-լոր անհրաժեշտ ուժեղ կերերը: (Վարսակ, ցորենի թեփ, գարու ալյուր և այլն):

1. Ամեն որ հորթի կաշին պետք է մաքրել: Մաքրել կարելի յեւ մաքուր շորով, ծղնոտով, փափուկ խողանա-կով: Պետք է մաքրել վոչ միայն կեղտից, ցեխից, այլ և փոշուց, վոր կուտակվում է մաղի տակին:

2. Տաք որերին (ամառները) լավ է հորթերին լո-դացնել, բայց վոչ շատ սառը ջրով: Գետերում կարելի յեւ լողացնել, միայն կես որից հետո, յերբ ջրերը տաքա-ցել են և ողն ել տաք եւ: Լողացնելուց հետո պետք է շորով ցամաքացնել մարմինը: Շատ փոքրերին (2—3 ամ-սականներին) սառ ջրով լվանալուց պետք է խուսափել, դրանց լավ է լողացնել տաք բնակարանում գոլ ջրով և խկույն մարմինը չորացնել: Յերբեմն հարկավոր է լվա-նալ մարմինը և սապոնով (լավ է գործածել կանաչ կամ կարբոլյան սապոն), Առանձին ուշագրություն պետք է դարձնել հորթի ճակատի, ծոծրակի և վզի լվանալու վրա: այդ մասերը պետք է հաճախ սապոնով լվանալ, վորով-հետև դրանց վրա հավաքված կեղար ստիպում ե զլիսով քորել զանազան առարկաներ, դրանից հորթը սովորում է հարու տալ:

3. Ամեն որ մարմինի զանազան մասերում պետք է փնտուել միջատներ(տիգ, շնաձանձ, բոռ և այլն), վորոնք գլխավորապես լինում են շեքում, փորի տակ, պոչի տակ, վզի վրա, ականջների շուրջը և մարմինի այլ փափուկ ու նուրբ տեղերում, և վոչնչացնել դրանց:

4. Ծծելուց կամ կաթ տալուց հետո հարկավոր է դունչը մաքուր ջրով լվանալ ու ցամաքացնել մաքուր շորով: Նույն ձեռվ հարկավոր է մաքրել և կովի պառկ-ները:

5. Հարկավոր է յերբեմն սմբակները նայել, արդյոք, փուշ կամ քար չի խրված մեջը, պոկված կամ ճաքած չեն և յերբեմն լվանալ սառը ջրով:

6. Հորթերը վատ սովորություն ունեն իրար դնչերը լիզելու, մազն ուտելու, պորտը և ականջները ծծելու, թոկերը, փայտա մասերը կրծելու, իրանց տակը փռած ցամքարը, (ծղնոտ, խոտ, փալաս և այլն) ծամելու և կուլ տալու, վորի պատճառով նրանք հաճախ հիվանդանում են, ստամոքսի և աղիքների բորբոքում ստանում և հաճախ նույնիսկ սատկում։ Դրա առաջն առնելու համար հարկավոր ե նորածին հորթերին դնչկալ հազցնել (տես նկ. 12 և 13)։ Այդ դնչկալները սովորաբար շինում են նավթուլից, իսկ ծայրը մետաղյա թասից։ Բայց կարելի յե հյուսել և ծղնոտից կամ ուռենուց, դամբյուղների կամ հաստ ծղիկների նման։ Ամեն անգամ ուտելուց կամ խմելուց հետո հարկավոր ե հազցնել դնչկալը և թողնել մինչև հետևյալ ուտելը։ Այդպես հարկավոր ե շարունակել 3—4 շաբաթ, վորից հետո կարելի յե վերջ տալ դնչկալի գործածությանը։



Նկ. 12
Հորթուկի դնչկալը

7. Յերբ հորթերն արդեն ամրացել են, մոտ 2—3 ամական դառել, նույնիսկ ցուրտ ժամանակները կարելի յե հետզհետե ընտելացնել դրսի ողին և ամեն որ դուրս տանել կարճ ժամանակով ման ածելու, յեթե ցուրտը չափազանց խիստ չե և քամիներ չկան։

8. Տաք ժամանակները պետք ե աշխատել հորթերին, ինչ հասակի ել վոր լինեն, պահել միշտ դուրսը և ման ածել։

9. Արածելուն անհրաժեշտ ե ընտելացնել արդեն

3—3 ամսական հասակից, յեթե ի հարկե արոտ կա դուրսը և շատ հեռու չե։


10. Հորթի տակը պետք ե լինի տաք, ցամաք, փափուկ և մաքուր։ Տակը պետք ե ծղնոտ (հարդ) փոել և շուտ-շուտ փոխել։ Այն անգամ հարկավոր ե հորթի կըդկը դանդները իսկույն և յեթ հավաքել և հեռացնել, հակառակ դեպքում հորթը կարող ե վրան նստել և ապականվել, բացի դրանից կղկղանքը պկում ե քայքայվել և սասակիկ վատ հոտ արձակել։



Նկ. 13

Հորթուկը դնչկալով

11. Պետք ե աշխատել հորթին անկապ պահել աղալում, բայց մի աղալում չի կարելի մեծ քանակությամբ հորթեր միասին պահել։ Յեթե հորթերը շատ են, լավ ե




Նկ. 14

Հորթի աղալ պատին կտխարած մոռւր

բաժանել աղալը մի քանի մասի և յուրաքանչյուրի մեջ պահել 3—4 զլուխ միայն։ Յեթե տեղի պակասություն չկա, ամենից լավը ե յուրաքանչյուր հորթի համար առանձին բաժանմունք շինել մոտ 5 քառ. արշին տարածությամբ (1,5 մետր լայնությունը, իսկ յերկարությու-

Նը 1,8 մետր): Աղալի ցանկապատի բարձրությունը պիտի լինի 1,5 մետրից վոչ պակաս:

12. Լավ կլինի ամեն մի հորթի համար շինել առանձին փոքրիկ շարժական, կախանովի մսուր, ինչպես ցույց ե տրված նկ. 14-ում: Ուժեղ կերերն ածվում են մսուրի մեջ, իսկ խոտը ճաղերի հետեւ (տես նկ. 15): Մսուրը պետք է այնպես դրված լինի, վոր հորթը ստիլված չը լինի վիզը բարձրացնել և մեջքը ծռել, այլ ուտելիս հան-




6կ. 15
Հորթի մսուրը

բի համար ամենալավ հատակը ցեմենտն է, վորի վրա պետք է շինել տախտակե շարժական հատակ, բայց այնպես, վոր տախտակի և ցեմենտի մեջ ա-

գիստ կարողանա կռանալ, իսկ խոտը ճաղերի հետեւ (տես նկար 16, 17, և 18): Աղալի ցանկապատի մեջ կարելի յեանցք բաց անել և դրսիցը կաթ տալ կամ ջուր խմացնել հորթին (տես նկ. 19):


13. Հորթե-

րանք լինի և հնարավոր լինի կարիք յեղած դեպքում տախտակները վերցնել, ցեմենտը լվանալ և նորից տեղը



6կ. 16

Ինչպես պետք է դրված լինի մսուրը, վոր հորթն ուտելու ժամանակ ուղիղ կանգնած լինի (ըստ Կրոնաբերի):




6կ. 17

Մսուրը բարձր է դրված, վորի շնորհիլ հորթի մեջքն ել ծռվում, վիզն ել (ըստ Կրոնաբերի):

7նել: Ով այդ հարմարությունը չունի, հորթերի տակը

պետք ե շատ ծղնոսութիւն, վոր տակը տաք լինի և փափռէ:


14. Աղալները սարերում (յայլաղներում) յերբեք բացողյա չպետք ե շինել, այլ անպայման ծածկած, վոր



Ֆլ. 18

Մոռըր բարձր ե դրված, վորի շնորհել թե հորթի մեջքն և ծըռ-
իւմ, թե վառերն են տուժում և թե կոկորդն ու կերակրափողը
ճնշվում մառերի կողի կողմից (ըստ Կրոնախերի):

Հորթերը չմնան անձրիի և խոնավ մառախուղի տակ և
տուժեն քամուց, անձրիից և կարկուտից: Սրանք բոլորն
ել վաս են (մանավանդ զիշերները) և այդ պատճառով



Ֆլ. 19

Ի՞նչպես են հորթին դրուց խմացնում

Հորթերը բնության այս պատահարներից պետք ե ազատ լինեն: Բացողյա աղալները միշտ ցեխով լիքն են լինում,
մանավանդ անձրիներից հետու Այդ միանգամայն ան-
թուլատելի յեւ Ցեխից և խոնավությունից հորթերը
ասստիկ տուժում են:

15. Անձրիի տակ ընկած հորթերի մարմինը պետք
ե ցամաքացնել, մանավանդ սարերում, վոր չմրսեն:

16. Զպիտի թույլ տալ, վոր հորթերը կեղտու ջուր
խմեն, մանավանդ ճահճուտ տեղերից:

17. Ցեթե հորթերը շատ են, նպատակահարմար կի-
ներ վորձերը և եղերը 4—5 ամսական հասակից իրարից
բաժանել և ջոկ աղալներում պահել: Լավ կլինի նույն-
պես, վոր առանձին առանձին արածեն:

18. Հորթերի հետ պետք ե վարվել մեղմ, չպիտի
չարացնել կամ ծեծել: Կոպիտ և վատ վերաբերմունքը
պատճառ ե գառնում, վոր նրանք հարու տվող, չար և
անհաշտ գառնան, լավ, մեղմ վերաբերմունքի դեպքում
ընդհակառակը նրանք դառնում են հանգիստ և մեղմ
քնավորության տեր կենդանիներ:

19. Հորթանոցը (գոմը) սառը չպետք ե լինի. հոր-
թերի համար լավ ե 8—10° ջերմությունը Թեոմյուրի
շերմաչափով: Սրանից տաքը ցանկալի չե, վորովհետև հոր-
թերը տաքին սովորելով ցըտին չեն դիմանում և հեշտու-
թյամբ կմրսեն:

Խնդիրներ յեվ առաջադրություններ

1. Մանրամասն զեկուցեցեք ձեր խմբակում, թե այս գլխում բհ-
րած կանոններից վարն եք անշեղ կատարում և վարը թերի,
կամ վարը բալորովին չեք կատարում և ինչու:
2. Զմուռաք ամառը, կալի ժամանակ, ծղնոտ յետ զցել թե
զնչկալ հյուսելու և թե հորթի տակը փոելու համար:
3. Պատրաստեցեք ծղից կամ ուսենու շիվերից զնչկալներ ձեր
հորթերէ համար:
4. Պատրաստեցեք շարժական մսուրներ ձեր հորթերի համար և
առանձին աղալ շինեցեք գոմում:
5. Նկարագրեցեք ձեր ջրերի վորակը և վորոշեցեք, թե դրանցից
վարն ե լավ հորթերի խմելու համար:
6. Ի՞նչ ձեի, ի՞նչ նյութից ավելի նպատակահարմար կլինի սա-
րում հորթանոց շինել և դրանցից վարն եք շինել ձեր հոր-
թերի համար:

Յ. ԱՐԴՏԸ. ՀՈՐԹԵՐԻՆ ՍԱՐ ՏԱՆԵԼԸ.
ՀՈՐԹԱՐԱԾՆԵՐԻ ՎՈՐԱԿԸ

Վոչ մի կեր (բացի կաթից) այնքան լավ ազդեցություն չունի հորթերի զարգացման վրա, վորքան լավ կանաչ խոտը: Այդ պատճառով արոտը հորթերի համար ունի մեծ նշանակություն: Մյուս կողմից արոտի ժամանակ հորթերը ման են գալիս, մարզվում են, արյան շրջանառությունը արագ ե կատարվում, ուստի և արագ են աճում: Արոտը հնարավորություն ե տալիս որվա մեծ մասը լինել դուրսը, արեի տակ և շնչել մաքուր ող, իսկ մաքուր ողն ու արեը շատ առողջարար կերպով են ազդում մատղաշ կենդանիների աճելու և զարգանալու վրա:

Արոտում մեծացած հորթերի փոսկրակաղմն աճուր ելինում, վոտներն ու սմբակները պինդ ու դիմացկուն: Նրանք ընտելանում են դժվար լանջերին, քարքարոտեղերին, բարձրանում են և իջնում, վորի շնորհիվ զարգանում և ամրանում են մկանները, սիրաը և թոքերը: Տանը մնացած, արոտ չգնացած հորթերը մնում են թույլ և քնքույց: Մեր պայմանների համար այդպիսիներն անպետք են:

Սակայն, արոտի այդ բոլոր առավելություններն արժեք ունեն միայն այն դեպքում, յերբ դրանց հետ միասին արոտը բավականաշափ առատ ե և սննդարար, Յեթե արոտն աղքատ ե, բուսականությունը սուղ, տեղը քարքարոտ, դժվարացնա և հորթը մի բերան խոտի համար ստիպված ելինում շրջել մեծ տարածություններ, հոգնում ե և կիսասոված վերադառնում տուն, այդ դեպքում արոտն ոգուտի փոխարեն կարող ե վնաս տալ հորթին, ուրեմն և հորթատիրոջը: Հորթն աճելու, մեծանալու փոխարեն կմնա վտիտ, մանր: Մեր գյուղացու հորթերը մեծ մասմբ աշխատ են չոր ու ցամաք հանդերը:

Ֆղնոտատեղերը և չոփուտները, հոգնում են և սոված վերադառնում տուն: Տանն ել շատ անգամ վոչինչ չեն ստանում, բացի մոր չնչին կաթից:

Այդպես պահպելով հորթերը կանոնավոր չեն աճում, չեն մեծանում: Յեթե հորթը մտադի հասակով կերապակաս յեղավ, ալպայում վորքան ուզում եք կերակրեք, նա իր պակասը չի վերականգնի, միշտ կմնա թռւակազմ և ապագայում արդյունավետ չի լինի, ինչպես մեր գյուղական կենդանիներն են:

Սրանից պարզ ե, վոր հորթի արոտը պետք ելինի առանձնապես առատ և սննդարար, վորպեսզի նա փոքր տարածությունից կարողանա անհրաժեշտ կերն ուտել ու կշանալ: Արոտը չպետք ե հեռու լինի տանից, բինուց: Պետք ե աշխատել հանդիսա տեղ արածացնել հորթերին: Նրանց չպետք ե հոգնեցնել և չափազանց շատ ման ածել: Ճահճոտ և քարքարոտ տեղերից պետք ե հեռու պահել:

Ինչպես ասել ենք արգեն, վորքան ել արոտը լավ լինի, հարկավոր ե առավոտները և, մանավանդ, յերեկոներն արոտից վերադառնալուց հետո հորթերին ուժեղ հավելյալ կեր տալ: Վորքան արոտն աղքատ ե, այնքան ել հավելյալ կերը շատ պետք ելինի:

Հորթերին հարկավոր ե անպայման սար տանել, բացի նրանից, վոր սարի խոար սննդարար ե, հորթերի համար մեծ նշանակություն ունեն նաև բարձր լեռների ողն ու արել:

Բարձր լեռներում ողն ավելի մաքուր ե, և ավելի նոսր: Նոսրության հետեանքով արյան շրջանառությունն արագանում ե և արյան կարմիր գնդիկներն ավելի աշագ են բազմանում: Իսկ ամենամեծ նշանակություն ունեցողը սարի արեգակն ե իր ճառագայթներով: Այդ հառագայթները բուժիչ են, նրանք բուժում են և ամ-

բացնում հիվանդոտ, թուլակազմ հորթերին, նպաստում են նրանց մեծանալուն, աճելուն, վորովհետև այդ ձառագայթների ազդեցության տակ մարմի ըջիչները, ինչպես նաև արյան կարմիր գնդիկներն, արագ են բազմանում: Վորքան բարձր ե արոտատեղն, այնքան ավելի մեծ ե արեկի բարերար ազդեցությունը հորթերի մեծանալու և աճելու վրա: Սրանից պարզ ե, վոր հորթերին սարտանելն անհրաժեշտություն է:

Սար գնացող հորթերին պետք ե նախապես սովորեցնել արոտին: Դրա համար գարնան արոտը վրա հասնելուն պես անհրաժեշտ ե հորթերին տանել մոտակա հանդերն ու արոտատեղերը սկզբում կործ ժամանակով, իսկ հետո հետզհետե յերկարացնելով արոտի տեսողությունը: Սարի արոտի պայմանները շատ դժվար են: Արոտին անսովոր, խամ հորթերը սոված են մնում, չեն կարողանում դժվար պայմաններում արագ շըշել և իրենց համար հեշտությամբ կեր ճարել: Նրանք չեն կարողանում դրսի պայմաններին դիմանալ (ցուրտ, անձրե, քամի և այլն) շուտ մրսում են, հոդնում, հիվանդանում և ամբողջ ամառվա ընթացքում չեն կազդուրվում, թուլ են մնում: Փորձված հորթերը գրանց նեղում են, լավ խոտնիքնենք են ուտում, իսկ թուլլերին թողնում են միայն վատ արոտի հույսին: Այդպիսիներն ավելի լավ ե բորբովին սարը չգնան, մնան գյուղում: Սար գնալու համար հորթը պետք ե առնվազն չորս ամսական լինի և, ինչպես ասացինք, արոտին սովոր:

Արոտին սովորեցնելուց բացի, սար գնալուց առաջ անհրաժեշտ ե նայել հորթի սմբակները և, յեթե շատ յերկարացած են, հարկավոր ե կորել, ինչպես կորում ենք մարդու յեղունգները: Ընդհանրապես, սմբակների վրա հարկավոր ե հսկողություն ունենալ, մաքուր պահել, վերք յեղած դեպքում ախտահանել, փաթաթել և այլն:

Արոտի ժամանակ մի շաբք միջաներ, ճանճեր, բռներ, զանազան տեսակի տիզեր և կպչող բույսեր նեղացնում են հորթերին: Հարկավոր ե միշտ նայել և մաքրել հորթերի կաշին՝ դրանցից: Շատ շողերին չպիտի արոտ տանել, այդ միջաներից ազատ պահելու համար:

Վորպեսպի արոտն իր նպատակին ծառայի, իր ամենաբարերար ազդեցությունը թողնի հորթերի աճման և զարգացման վրա, հարկավոր ե կանոնավորել և ուցիունալ հիմքերի վրա դնել հորթերի արածացնելը: Դրա համար նախ և առաջ պետք ե հորթերին պատահական արոտներից ազատել, վորտեղ հորթը մի որ գուցե կշատնում ե, բայց մի քանի որ սոված և մնում: Հարկավոր ե նրանց համար հատուկ արոտատեղեր ստեղծել, վորտեղ հորթերն ամեն որ առաջ կեր կարողանան գտնել իրենց համար: Այդ նպատակսի անհրաժեշտ ե, վոր հորթատերն ու հողերը մի փոքր կտոր (հորթերի քանակին համապատասխան) հատկացնի հորթերի արոտին, ցանկապատի և ազատ պահի մեծ կենդանիներից, զաներից և վոչխարներից: Վոչխարներն ու զաները արորում են, վշացնում արոտը, իսկ մեծերը նաև խանդարում, հրում են հորթերին, վորի պատճառով սրանք զրկվում են լավ արոտից: Այդ արոտատեղը պետք ե այնպես ողտագործել, վոր մի կողմից խոտն իգուր տեղը չտրորվի, մյուս կողմից յերկար ժամանակ չարածելուց չփառանա, չկուպտանա: Մից յերկար ժամանակ չարածելուց մասների բաժանները պետք ե այնպես զասավորել, վոր մինչև մի շաբաթացները՝ նախարարությունում իսուրը նորից դուրս յեկած լինի: Վոմանք խորհուրդ են տալիս այդպիսի արոտատեղերում հորթերին կապել (որգել), բայց միայն մի տարեկաններին, և վոչ փոքրերին: Վերջինները պետք ե ազատ շարժվեն: Այդպիսի հողամասերում լավ ե արոտին հարմար խոտեր ցանել, վորոնք համ սննդարար լինեն,

Գրա համար հարկավոր ե արոտատեղը մասների բաժաններ և հերթով արածացնելը: Արածելու ժամանակաժամաները պետք ե առաջ արածացնելը՝ նախորդ կտորներում իսուրը նորից դուրս յեկած լինի: Վոմանք խորհուրդ են տալիս այդպիսի արոտատեղերում հորթերին կապել (որգել), բայց միայն մի տարեկաններին, և վոչ փոքրերին: Վերջինները պետք ե ազատ շարժվեն: Այդպիսի հողամասերում լավ ե արոտին հարմար խոտեր ցանել, վորոնք համ սննդարար լինեն,

բացնում հիվանդոտ, թուլակազմ հորթերին, նպաստում են նրանց մեծանալուն, աճելուն, վորովհետև այդ ճառագայթների ազդեցության տակ մարմի ըջիչները, ինչպես նաև արյան կարմիր գնդիկներն, արագ են բազմանում: Վորքան բարձր ե արոտատեղն, այնքան ավելի մեծ ե արևի բարերար ազդեցությունը հորթերի մեծանալու և աճելու վրա: Սրանից պարզ ե, վոր հորթերին սարտանելն անհրաժեշտություն ե:

Սար գնացող հորթերին պետք ե նախալես սովորեցնել արոտին: Դրա համար գարնան արոտը վրա հասնելուն պես անհրաժեշտ ե հորթերին տանել մոտակա հանդերն ու արոտատեղերը սկզբում կարճ ժամանակով, իսկ հետո հետզհետե յերկարացնելով արոտի տևողությունը: Սարի արոտի պայմանները շատ դժվար են: Արոտին անսովոր, խամ հորթերը սոված են մնում, չեն կարողանում դժվար պայմաններում արագ շրջել և իրենց համար հեշտությամբ կեր ճարել: Նրանք չեն կարողանում դրսի պայմաններին դիմանալ (ցուրտ, անձրե, քամի և այլն) շուտ մրսում են, հովնում, հիվանդանում և ամբողջ ամսովա ընթացքում չեն կազդուրվում, թույլ են մնում: Փորձված հորթերը դրանց նեղում են, լավ խոտնիքնենք են ուտում, իսկ թույլերին թողնում են միայն վատ արոտի հույսին: Այդպիսիներն ավելի լավ ե բոլորովին սարը չկնան, մասն գյուղում: Սար գնալու համար հորթը պետք ե առնվազն չորս ամսական լինի և, ինչպես ասացինք, արոտին սովոր:

Արոտին սովորեցնելուց բացի, սար գնալուց առաջ անհրաժեշտ ե նայել հորթի սմբակները և, յեթե շատ յերկարացած են, հարկավոր ե կարել, ինչպես կարում ենք մարդու յեղունդները: Ընդհանրապես, սմբակների վրա հարկավոր ե հսկողություն ունենալ, մաքուր պահել, վերք յեղած դեպքում ախտահանել, փաթաթել և այլն:

Արոտի ժամանակ մի շաբք միջատներ, ճանճեր, բռներ, զանազան տեսակի տիզեր և կպչող բույսեր նեղացնում են հորթերին: Հարկավոր ե միշտ նայել և մաքրել հորթերի կողին՝ դրանցից: Շատ շոգերին չպիտի արոտ տանել, այդ միջատներից ազատ պահելու համար:

Վորպեսպի արոտն իր նպատակին ծառայի, իր ամենաբարերար ազդեցությունը թողնի հորթերի աճման և զարգացման վրա, հարկավոր ե կանոնավորել և ուցիունալ հիմքերի վրա զնել հորթերի արածացնելը: Դրա համար նախ և առաջ պետք ե հորթերին պատահական արոտներից ազատել, վորտեղ հորթը մի որ գուցե կշտանում է, բայց մի քանի որ սոված է մնում: Հարկավոր ե նրանց համար հատուկ արոտատեղեր ստեղծել, վորտեղ հորթերն ամեն որ առատ կեր կարողանան զտնել իրենց համար: Այդ նպատակով անհրաժեշտ ե, վոր հորթատերն հողերից մի փոքր կտոր (հորթերի քանակին համապատասխան) հատկացնի հորթերի արոտին, ցանկապատի և ազատ պահի մեծ կենդանիներից, զառներից և վոչխարներից: Վոչխարներն ու զառները արորդում են, փշացնում արոտը, իսկ մեծերը նաև խանդարում, հրում են հորթերին, վորի պատճառով սրանք զրկվում են լավ արոտից: Այդ արոտատեղը պետք ե այնպես ոգագործել, վոր մի կողմից խոտն իզուր տեղը չտրոքի, մյուս կողմից յերկար ժամանակ չարածելուց չփչանա, չկոպտանա: Մից յերկար ժամանակ չարածելուց չփչանա, չկոպտանա:

Դրա համար հարկավոր ե արոտատեղը մասների բաժանում համար հերթով արածացնել: Արածելու ժամանակաժանները պետք ե այնպես զասագորել, վոր մինչև մի շըջանները պետք ե այնպես զասագորել կտորներում իստորից դուրս յեկած լինի: Վոմանք խորհուրդ են տալիս այդպիսի արոտատեղերում հորթերին կապել (որգել), բայց միայն մի տարեկաններին, և վոչ փոքրերին: Վերջինները պետք ե ազատ շարժվեն: Այդպիսի հողամատերում լավ ե արոտին հարմար խոտեր ցանել, վորոնք համ սննդարար լինեն,

համ հողին ու կլիմային հարմար և բերքառատ, Նախ քան ցանելը, հարկավոր և արոտները կարգի բերել. մաքրել փշաթփերից և փշաթփերից, թունավոր և անպետք բույսերից, քարերից, ձկոտ տեղերը չորացնել, վորտեղ հնարավոր ե, պետք ե փոցինել, գետնի յերեսը քրքրել: 1—2 տարուց հետո կարելի յե հորթերի արոտի համար հատկացնել և վարելահողերից, բայց այդ գեղքում նպատակահարմար ե վոր այդ հողերը մտնեն ցանքսաշըջանառության մեջ, իբրև արոտ, կամ արոտ խոտհարք:

Գյուղական համայնքներն, ընկերությունները, խըմբակները և այն պետք ե իրենց հանդի լավագույն կտորը հատկացնեն հորթերին, բարեկարգ վիճակի բերեն արոտաեղերը և թույլ չտան, վոր այդտեղ ուրիշ կենդանիներ արածեն:

Հորթերին արածացնելը շատ պատասխանատու և գժվարին արհեստ ե: Արածացնելու միջոցով կարելի յե հորթերին հարկադրել, վոր նրանք մինչև առաջների խոտը ըրիկ չարածեն, առաջ չգնան: Կարելի յե արածելն այնպես կազմակերպել, վոր հորթերը սուղ արոտումն ել կշտանան: Դա կախված ե հորթարածներից, հորթապահների շնորքից, նրանց գիտակցությունից և այն վերաբերմունքից, վոր նրանք ունեն դեպի կենդանիներն ընդհանրապես և հորթերը մասնավորապես: Վատ հորթարածը հորթերի տանջանքն ու գժրախտությունն ե, լավը՝ նրանց յերջանկությունը: Վատ հորթարածը հորթերին կտանի հանդը և սոված կբերի, կտանի ջուրը՝ ծարավ կբերի: Նրա ճիպոտի տակ կուչ ու հուպ են դալիս հորթերը, նիհարում են, վոչ կերածն ե նրանց աչքին դալիս, վոչ՝ խմածը: Հասկանալի յե, վար այգպիսի վերաբերմունքն ազգում ե կենդանիների մատաղ սերունդի զարգացման վրա ամենաբացասական կերպով:

Արանից առաջանում ե հորթապահների վորակի

խնդիրը: Առանց լավ հորթապահների լավ հորթեր չենք կարող ունենալ: Մեր գյուղերում նրանք մեծ մասամբ յերեխայք են՝ անփորձ, անգիտակից, հորթերի հետ վարվելու և արածացնելու ձեւերը չգիտեն: Անհրաժեշտ ե իբրև հորթապահ վարձել ավելի պատրաստված և խելքը զլախն մարդիկ և ամենազլխափորն անհրաժեշտ և հորթապահների դասընթացներ կազմակերպել, թեկուզ կարձատել: Համայնական և ընկերական հորթապահների պաշտոնին հրավիրել միմիայն այդ դասընթացներն ավարտողներին:

Հորթապահների վորակը բարձրացնելուց, կարելի յե ասել, մեծ չափով կախված ե մեր անասնապահության բախտը:

Խնդիրներ յեվ առաջադրություններ

1. Խորհրդակցեցեք գյուղխորհրդի գյուղսեկցիայի հետ հորթերի համար առանձին արոտատեղ հատկացնելու մասին և ձեռքբերեք այդ առթիվ գյուղխորհրդի վորոշումը:
2. Կազմակերպեցեք շարաթորյակներ հորթերի արոտատեղիները կարգի բերելու համար:
3. Փորձեցեք արոտատեղի վրա լավորակ խոտերի սերմ ցանել առափ վորակը բարձրացնելու համար:
4. Արոտի գնացող հորթերին շարաթը մեկ անգամ կշռեցեք և բարձրությունն ույերկարությունը չափեցեք, պարզելու համար, թե ինչպես ե ազդում արոտը հորթի վրա:
5. Կատարեցեք հետեւյալ փորձը: Արոտ գնացող հորթերից միքանին հավելյալ կեր ավել տանը, մյուսներին՝ վոչ, պարզելու համար համար հավելյալ կերի նշանակությունն արոտի ժամանակ:
6. Պարզեցեք թե ձեր գյուղի սար գնացող հորթերը սար գնալու ժամանակ ինչ հասակի յեն լինում: (Կազմեցեք դիագրամա):
7. Սար գնացող բոլոր հորթերին կշռեցեք և չափեցեք նրանց բարձրությունը, յերկարությունը և կրծքի փաթը: Սարից իշնելուց նույնպես: Տարբերությունից վորոշեցեք, թե ա—

- հորթերի քաշն, և շատ վուխվել, թե՞ մարմնի չափերը, բ. — վճռ հասակի հորթերի վրա ավելի լավ և աղղել սարը. այդ առթիվ կաղմեցիք գիտքամմա, գրեք մի հոգված, ուղարկեցիք «Մաճկալ» թերթին ու միաժամանակ զետեղիցեք ձեր պատի թերթում ու զեկուցեցիք զյուղացիների ժողովում:
8. Ձեր գյուղի հորթարածների և տափարարածների համար կաղմակերպեցիք դասրնթացներ (հրավիրեցիք ձեր շրջանի գյուղանահան և նրա հետ միասին կաղմեցիք ծրագիրը և կողմակերպեցիք դասրնթացները):

9. ԾՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Ռացիոնալ անասնապահության խոշոր խնդիրներից մեկը նկետք ել լինի զյուղատնօւնական կենդանիների ծընելու ժամանակի կանոնավորումը: Ծնելու ժամանակի ժամածված կանոնավորումը գոյություն ունի մեզանում վոչխարարության և մասամբ ել խոզարության մեջ: Վոչխարի և խոզի ծնելու ժամանակը սովորաբար հարմարեցվում ել գարնան սկիզբներին, այն հաշվով, վոր ծնեն կանաչ արոտը հասնելուց մոտ մի ամիս առաջ: Դրա համար ել խոյերին (զոչերին) ու վարագներին ջոկ են պահում եգերից և խառնում են, յերբ հարմար են գտնում:

Տակարի ծնելու ժամանակը մեզ մոտ ամենին չի կանոնավորվում: Հորթերի ծնունդն ընդհանրապես տեղի յե ունենում տարվա բոլոր յեղանակներին, իսկ մեծ մասամբ դարձյալ ձմեռվա վերջին և զարնան սկիզբներին (փետրվար—ապրիլ ամիսներին): Դրա պատճառն այն է, վոր կովերը մեծ մասամբ ցուլի յեն գալիս մայիս-հունիս և հուլիս ամիսներին արոտում, յերբ արդեն ձմրան քաղցածությունն ու հյուծվածությունն անցել ել իրենք կաղդուրվել ու առողջացել են, վորի հետեանքով սկսում են ցուլով գալու պահանջ զգալ հենց այդ ամիսներին:

Ծնելու ժամանակը շատ և ազդում թե հորթերի զարգացման և թե կովերի կաթի քանակի վրա: Բազմաթիվ գիտողություններն ու փորձերը ցույց են տվել, վոր տարբեր ժամանակներում ծնված հորթերը, տարբեր կերպով են զարդանում: Որինակ, աշնան վերջին ծնվածներն ավելի լավ են զարգանում, քան զարնան սկզբնը, իսկ սրանք ավելի լավ են զարգանում, քան ամառվա ծնվածները: Հորթերի լավ աճելու և զարգանալու տեսակետից ծնելու ամենալավ ժամանակը համարվում են աշնան և ձմեռվա ամիսները: այսինքն՝ հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և հունվար ամիսները: Այդ ամիսներին ծնված հորթերը սովորաբար լավ են աճում և զարգանում, յեթե, ի հարկե, տաք բնակարանում են տպրում, չեն մրսում և կանոնավոր սնունդ են ստանում: Աշնան և ձմրան ծնված հորթերի զարգանալը բացադրվում են նրանով, վոր 1) կովերի հղիությունն անցնում ե բարենպաստ պայմաններում, ամառվա որերի լավ ժամանակ, յերբ կովն առողջարար սնունդ ե ընդունում և, միշտ արոտում լինելով, մաքուրող և շնչում և շարժման մեջ ե գտնվում: Իսկ այս բոլորն, ինչպես դիտենք, սաղմի վրա շատ լավ են ազդում: 2) Աշնան և ձմրան ծնված հորթերն արդեն մեծացած և պատրաստ են լինում դարնան և ամառվա արոտից առավելագույն չափով սպավելու համար: Իսկ հայտնի յե, վոր կանաչ արոտը շատ լավ աղղեցություն ունի հորթերի կանաչ արոտը շատ լավ աղղեցություն ունի հորթերի վարգացման վրա: Վորքան մեծ հասակում ե հորթն արոտական անցնում, այնքան նաև տվելի լավ և ոգավում արոտից: Ծնունդը հարկավոր ե կանոնավորել այն հաշվով, որ կանաչ արոտի լավ ժամանակ հորթը գոնե 4 ամսական լինի: Այդ անհրաժեշտ ե մանավանդ սարերի արոտական լինի: Վոր անհրաժեշտ է մանավանդ սարերի արոտադորձելու համար, վորովհետեւ սարերում մատներն ոգտադորձելու համար, վորովհետեւ սարերում մատներն արագացնելու համարից չեն կարողանում լավ ոգտվել և զաշ հորթերն արագացնելու համարից չեն կարողանում լավ ոգտվել և մասն են թուլ: Դրա համար ել պետք ե կանոնավորել կովերի ցուլով գալը, հիշելով, վոր կովերի հղիությունը

տեսում և 9 ամիս և 10—12 որ: 3) Աշնանածին և ձմեռ-
ածին հորթերն, իբրև մեծացած էորթեր, ամառվա շողին
և ցրաերին (սարերում) լավ են դիմանում և ճանձերից
ու բզեզներից այնպես չեն տուժում, ինչպես մատղա-
ները: 4) Աշնանն ու ձմեռները սովորաբար զյուղացիք,
ազատ ժամանակ շատ ունենալով, կարող են ավելի կա-
նոնավոր խնամել ու կերակրել իրենց հորթերին:

Հայտնի յե, վոր նոր ծնած կովն առաջին 2—3 ամիսն
ընդունակ ե շատ կաթ տալու և տալիս ե, յեթե կերը
բավարար ե լինում: Մյուս կողմից ել զիտենք, վոր գար-
նան և ամառվա կանաչ արոտը կաթ առաջացնելու վրա
շատ լավ ե ազգում: Այնպես վոր, յեթե գեկտեմբերին
ծնած կովը կանոնավոր կերակրվի, ամբողջ ձմեռը շատ
կաթ կստացվի ե, յերբ գարնան արոտը վրա հասնի, նո-
րից կաթը կավելանա և մինչև կանաչ արոտի վերջը, կո-
վից շատ կաթ կստացվի: Այդպիսով հնարավոր ե մի կող-
մից յերկարացնել կաթնատվության շրջանը և այդ շրջ-
անում շատ կաթ ստանալ, մյուս կողմից ել՝ ձմեռվա
կաթը շատ թանգ ե ծախվում և այդպիսով աշնան և ձը-
մեռվա սկզբին ծնած կովն իր տիրոջն ավելի մեծ ողուտ
և տալիս, քան ուրիշ ժամանակներում ծնածը: Սակայն,
ծնելու ժամանակի կանոնավորման դեպքում չպիտի մո-
ռանալ և այն, վոր ամենաեժան կերն արոտն ե և ամե-
նաեժան կաթը արոտից ե ստացվում: Այդ պատճառով
ամառվա արոտները հարկավոր ե լիովին ողտագործել,
իսկ դրա համար պետք ե աշխատել, վոր, գոնե, մինչև
սեպտեմբերի վերջը կովերը չցամաքեն: Նոյեմբերից վոչ
շուտ ծնած կովերը և մարտ—ապրիլ ամիսներին ցուլով
յեկածները կարող են կթվել մինչև սեպտեմբերի վերջը,
յեթե բավարար կեր են ստանում: Գյուղացիների համար
այս հանգամանքը շատ կարեոր ե և պետք ե աշխատեն
սկսվել զբանից:

Ուրեմն, յեթե մենք ուզում ենք, վոր մի կողմից
արոտի լավ ժամանակ և սարի արոտի սկզբին (մայիս—
հունիս) առնվազն չորս ամսական հորթ ունենանք և մի-
տաժամանակ կարողանանք ամառվա արոտները լրիվ ող-
տագործել, հարկավոր ե կովերի ցուլով գալը զցել փե-
տըրվար—ապրիլ ամիսներին, վորպեսզի ծնեն նոյեմբեր
—հունվար ամիսներին: Այսպիսի կանոնավորումը հար-
մար ե լեռնային շրջանների նստակյաց և սար գնացող
անասունների համար ընդհանրապես: Մյուս շրջանների
և այլ տիպի անասնապահության դեպքում, ի հարկե, հար-
կավոր ե այլ կերպ դասավորել, յենելով ավյալ պայման-
ներից:

Բայց ինչպես անենք, վոր կովը մեր ցանկացած ժա-
մանակ ցուլով գա:

Դրա համար պետք ե իմանալ, վոր ստերջ կովը հո-
մարյա ամիսը 1—2 անգամ ցուլով գալու սրամադրու-
թյուն ե ցույց տալիս միանգամայն անկախ տարվա յե-
ղանակից, միայն հարկավոր ե, վոր նա բավարար կեր
ստանա և կերի պակասությունից ու քաղցից չտա-
ռապի:

Յեթե կովը ցուլով ե գալիս վնչ մեր ցանկացած ժա-
մանակ՝ պետք ե թողնել, վոր հովանա և բուղով անել
հաջորդ անգամ, յերբ հարմար կգտնվի:

Խնդիրներ յեվ առաջադրություններ

- Վար սարն ե բարձրանում ձիր տավարը, վար ամսին և յերբ
ե վերադառնում:
- Վար ամիսներին ե ցուլով գալիս ձեր գյուղի կովերի մեծ մասը
և ինչպի եք այդ բացատրում:
- Հաշվեցեք, վորքան կաթ են տալիս ուշ աշնան և գարնան ծը-
նած կովերը:
- Վար հորթերն են ավելի լավ գարզանում, աշնան, և ձմրան ծը-

վածները թե գարնան և ամբան: (Որինակներ ըերեք ձեր
տեսածից):

5. Զեր գյուղի պայմանների համար կովերի ծնելու տեսակետից
վեր ամիսն և ավելի նպատակահարմար և բնչու:
6. Դիտեցեք, թե վեր կովերն են ավելի շուտ ցուլով գալիս՝ լավ
կերպածները թե վատ:
7. Զեր կարծիքով. ի՞նչ միջոցների պետք ե դիմել էռվերի ծնելու
ժամանակը կանոնավորելու համար: (Չմրան կերով ապա-
հովումը, ձմրան կաթի սպառումը ձիոնտու պայմաններով,
ուժեղ պրոպագանդա և այլն):
8. Հրավիրեցեք կովատերերին ժողովի և առաջարկեցեք ձեր կազ-
մած նախագիծը կովերի ծնելու ժամանակը ձեր գյուղում
կանոնավորելու մասին:

10. ԳՈՄ ՅԵՎ ՀՈՐԹԱՆՈՅ. ԿՈՌՊԵՐԱՏԻՎ ԳՈՄԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆԳՐԱԺԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Գոմերը և հորթանոցները պետք ե բավարարեն
առնվազն հետևյալ տարրական պահանջներին:


1. Նրանք պետք ե լինեն տաք:
2. Պետք ե մաքուր ոդ ունենան:
3. Լուսավոր լինեն և
4. Անթափանց, չոր հատակ ունենան:

Տաք լինելու համար գոմը փոչ մի ծակ ու ծուկ
չպետք ե ունենա, դոներն ու լուսամուտները պետք ե
շինված լինեն ամուր և առանց ձևդերի: Գոմի մեծու-
թյունը միանգամայն պետք ե համապատասխանի կենդա-
նիների քանակին, վորպեսզի որպանք մի կողմից իրենց
մարմնով կարողանան տաքացնել գոմը և մյուս կողմից բա-
վականաշափ ոդ ունենան շնչելու համար: Մեր գյուղերի
գոմերն ընդհանրապես տաք են լինում, վորովհետև նեղ-
վածք են, բայց նեղվածք լինելը լավ չի:

Հորթանոցի մաքուր ոդը հորթերի կանոնավոր աճ-
ման ամենաառաջին պայմանն ե: Գոմի կամ հորթանոցի

կեղտու ովը բաղկացած ե զանազան թունավոր գաղե-
րից, վորոնք խանգարում են կանոնավոր շնչառությանը,
բորբոքում են կենդանիների աչքերը և թուլացնում կեն-
դանիներին: Աւզդակի կարելի յե զարմանալ մեր տավա-
րի վրա, վոր ծնվելու որից իր կյանքի կեսն անցկացնե-
լով գոմի նեխված ո-
գում, ելի կարողանում
ե աճել ու բանի պետք
գալ:

Միշտ մաքուր ոդ ու-
նենալու համար հարկա-
վոր ե, վոր գոմի ունե-
նա պատուհաններ և
առաստաղում ոդանցք-
ներ: (Տես նկ. 20): Այս
նկարում ցույց ե տված
Մուիրի ոդանցքը, վոր
մի չորսկողմանի տախ-
տակյա խողովակ ե յեր-
կարությամբ, միջից
խաչաձե չորս մասի բա-
ժանված (տես նկ. 21):
Դրա մի մասը գուրան ե
մնում, կտուրից մոտ 30
սանտ. բարձր, իսկ ներ-
քեի մասը առաստաղից
իջնում ե ներս այն հաշ-
վով, վոր կարելի լինի
ձեռքով հասնել նրա
ծայրին և գոնակները




Նկ. 20

Մուիրի ոդանցքը

բաց ու խուփ անել: Դոնակները գտնվում են խողովակի
ներքեի մասում, յուրաքանչյուր կողմի վրա մի հատ:
Յերբ ուզում են ոդը մաքրել, բայց են անում այդ

գոնակները և թողնում այդպես մի վորոշ ժամանակ՝ խողովակի յերկու կողմից մաքուր ողը դրսից դալիս եներս, իսկ յերկու մյուս անցքերից կեղտոտ ողը դուքս է գնում: (Տես նկ. 22). Դա կախված է դրսի քամուց. քամու կողմից ողը ներս է դալիս յերկու անցքով և ճշշում է գործում գոմի ողի վրա և մյուս յերկուսով գոմի ողին մզում ե դուքս: Խողովակի ներքեի ծայրին մի լայն տախտակ ե կացրած, վորպեսզի դրսի ողը ներս գալով դիպչի տախտակին և փռվի գոմի ողի մեջ և չհոսի ուղիղ կենդանիների վրա: Մի այդպիսի խողովակ բավական է մոտ 20 գլուխ խոշոր կենդանիների համար, յեթե գոմի ծտվալը համապատասխանում ե կենդանիների քանակին (20—22 խոր. մետր ող մեկ մեծատափարի համար):



նկ. 21

Ողանցքի խողովակը միջին
իշխանական կարգած պահանջանք կենդանիների վրա և աշխատացնում նրանց: Լույսի կարիքն զգում են մանավանդ մատղաշ կենդանիները, վորովհետեւ լույսը նպաստում է նրանց արագ աճելուն և զարգանալուն: Լուսափոր գոմում կենդանիների տեսողությունը լավ է զտրգանում, իսկ մութ գոմերում տեսողությունը փշանում է: Դրա համար ել գոմերը պետք է լինեն լուսափոր: Այդ պատճառով, գոմում հարկափոր ե մաքրությունը պահպանել, հարկափոր ե գոմերը շինել պատռհաններով: Վերջինները պետք ե շինել այն հաշվով, վոր պատռհանների ապակիների մակերեսը կազմի հատակի մակերեսի 10—15. երորդական մասը:


Մեր գյուղական գոմերն այնպես են շինված, վոր նրանց դժվար ե մաքուր վիճակում պահել: Գլխավոր պահանություններից մեկն ել այն ե, վոր հատակը հողից ե, լավ չի մաքրվում, հողը ծծում է մեզը, վորից նեխում ե գոմի ողը, հոտում: Այս բոլորի շնորհիվ բուն են գնում զանազան հիվանդությունների սաղմեր և վարակում են կենդանիներին: Տափարի տակը պետք ե շինել ջուր չծծող և հեշտ լվացվող նյութերից (ցեմենտ, սալ քար):

Գոմի առաստաղը հարկափոր ե այնպես շինել, վոր վերկից հող չթափվի: Մսուրները պետք ե շինել մաքուր տախտակից վոր կարելի լինի ժամանակ առամանակ լվանալ:

Հորթերի համար հարկափոր ե գոմում առանձին տեղ կտրել: Հորթերի տակը պետք ե շինել և պահել պահել առանձին տեղություններում: Սուրբի ողանցքի խողովակի սինման: այնպես, ինչպես նկարած լուսքները ցույց են տալիս ողի հոսությք գրված ե 7-րդ գլխում: ուղղությունը:

Շատ հորթեր լինելու դեպքում, կարելի յե և առանձին հորթանոց շինել և բաժանել աղալների: Կարելի յե նույնիսկ յուրաքանչյուր հորթի համար առանձին աղալ ունենալ: (Տես նկ. 7 և գլ. 7):

Զըափոր և միջակ անհատ գյուղացիների համար այդպիսի գոմեր կառուցելը դժվար ե, նըանք միջոցներ



նկ. 22

չունեն և բացի դրանից ամեն մեկն առանձին դժվարությամբ ե գլուխ քաշում և նույնիսկ ցանկացած դեպքում ել գործը դժվարությամբ գլուխ բերում։ Սրանցից շատ քերին և հաջողվում գոմը կարգի բերել կամ նոր գոմ շինել։

Մակայն, մեր յերկրի տավարի մեծ մասը գտնվում է միջակ և չքավոր գյուղացիների ձեռքին։ Ունկորների տավարը չնչին տոկոսն է կազմում։ Յեթե միջոցներ ձեռք չառնենք միջակ և չքավոր գյուղացիության գոմերը մասսայականորեն կարգի բերելու, մեր յերկրի անասնապահության զարգացումն արագ չի ընթանա, վարովնետե գոմի խնդիրն անասնապահության վողջ խնդիրների կեսն է կազմում։

Ուրեմն ի՞նչ պետք ե անել։

Պետք ե կոռպերատիվ գոմեր (հորթանոցներ) կառուցել։

Մի քանի գյուղական ընտանիքներ կազմում են ընկերություն, միասին կառուցում են մի մեծ գոմ, վորը բաժանում են համաձայն ընտանիքների թվի։ Ամեն մի բաժնի մեծությունը համապատասխանում է տվյալ անդամի տավարի քանակին։ Գոմի կառուցման ծախսն ել բաժանվում է անդամների տավարի քանակի վրա։ Յանկալի յե, ինարկե, բաժանմունքների միջապատերը շարժական շինել (փայտից), վորպեսզի կենդանիներին կուլյեկտիվ ձեռվ պահելու դեպքում կարելի լինի հանել միջաղատերը։ Այդ պահանջին պետք ե համապատասխանի մասրների կառուցումը և դոների ու պատուհանների դասավորումը։

Սրանք կոռպերատիվ գոմի հիմնական պայմաններն են։ Մեր ճարտարապետներին ե մնում տեխնիկական հարմարություններ մշակել և կատարելագործել, ընդառնաջարկում կուլյեկտիվացման պահանջներին։ Սոցիա-

լիստական շինարարությունը բոլորովին նոր պահանջներ ե դնում գոմերի համապատասխան վերափոխման նկատմամբ, և, յեթե մենք այս խնդրում չկ սրողանանք դյուրին և եժան միջոցներ առաջարկել գյուղացուն, չենք կարողանա լուծել մեր առաջ դրված անասնապահության գարգացման խնդիրը։

Այստեղ առաջարկված կոռպերատիվ գոմերը հեշտ ընդունելի յեն գյուղացիության կողմից և առաջին ետապն են հանդիսանում կուլյեկտիվ անասնապահությանն անցնելու համար։ Այն գյուղացիք, վորոնք մի քանի տարի կոռպերատիվ գոմում կպահեն իրենց տավարը, հետագյում այնքան կնախապատրաստվեն, վոր դժվարություն չեն զգա, տավարի պահելու ու խնամելու ել նույնպես կատարել կուլյեկտիվ հիմունքներով։ Այդպիսի գոմեր կազմակերպելու համար անհրաժեշտ է կազմակերպել գոմային ընկերություններ, վորոնք հեշտությամբ կարող են վարկագործել մեր վարկային հիմնարկությունների կողմից։ Զբագոր և միջակ տավարատերերը պետք ե միանան և գուալին ընկերություններ կազմեն, վորպեսզի կարողանան իրենց կենդանիներին, ինարկե և հորթերին, նպաստավոր պայմաններում մեծացնել։

Մակայն, սրանից չպիտի յեղբակացնել, վոր սրանք, վորոնք ի վիճակի յեն իրենց գոմերը կարգի բերել, լուսամուտներ բաց անել, ողանցքներ չինել և այլն, չպիտի անեն այդ ընդհակառակն, յուրաքանչյուր տավարատեր, յեթե ուժը պատում ե, պետք ե աշխատի վերակազմել իր գոմը և մտցնել գոմի մեջ վորքան կարելի յե շտաբարեփոխումներ։

ԽԵՂԻՐՅԵՐ յԵՎ ԱՌԱՋԱԾՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասնորեն նկարագրեցեք ձեր գոմերի պակասություններն ու առավելությունները:
2. Ի՞նչ նյութերից և ի՞նչ ձեռվ ավելի նպատակահարմար է ձեր գյուղի պայմաններում գոմ շինել:
3. Աշխատեցեք 2 տարում ձեր գոմը բարեկարգ վիճակի բերելու ա. Պատերից կամ առաստաղում լուսանցքներ բացեք:
- բ. Մուերի սիստեմի ողանցք անցկացրեք:
- գ. Պատրաստեցեք կանոնավոր մսուրներ:
- դ. Գոմում հորթերի համար աղալ կտրեցեք և յուրաքանչյուր հորթի համար շինեցեք մի առանձին մսուր (տես կն. 7):
- ե. Կանոնավորեցեք կենդանիների տակը և առու անցկացրեք զոմի ներսից, վոր մեղը չհավաքվի այլ, հոսք դուրս:
- զ. Առաստաղն ու պատերը սպիտակացրեք կրով:
4. Հրավիրեցեք գյուղի տավարատեր չքափորներից և միջակներից մի խորհրդակցություն կոռպերատիվ զոմ կառուցելու համար և կաղմակերպեցեք զոմային ընկերություն:

11. ՀՈՐԹԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՌԱՑԻՈՆԱԼ ԽՆԱՄՔԻ ՄԱՍՍԱՅԱՆՍՅՈՒՄԸ

Լավ արդյունավետ կենդանիներ ստանալու համար բավական չե միայն լավ կերակրումն ու խնամքը: Անհըրաժեշտ ե նույնպես, վոր այդ պահպատ բուծվող կենդանիներն ի ծնե արդյունավետ դառնալու հատկություններ ել ունենան, վորպեսզի լավ կերակրելով ու պահելով կարելի լինի դրանց այդ հատկությունները զարգացնել:

Կենդանիներն իրենց լավ և վատ հատկություններն ստանում են ժառանգաբար իրենց ծնողներից և նախնիքներից: Յեթե մի վորեե կենդանու ծնողներն ու նախնիքները նշանափոր են յեղել մի վորեե հատկությունով, որինակ՝ կաթնառատությամբ, ապա մեծ հույս կա, վոր

այդ կենդանին ել կաթնառատ կլինի: Կարող ե պատահել, ի հարկե, վոր լավ ծնողներից վատ զավակներ ստացվեն, բայց այդպիսի դեպքեր քիչ կլինեն. լավ նախնիքներից լավերն ավելի շատ կստացվեն, քան վատերը, իսկ վատերից վատերն ավելի շատ կստացվեն, քան լավերը:

Այս իմանալով, մենք պետք ե անպայման պահենք և մեծացնենք կաթնառատ ծնողներից ստացված հորթերին. ուրիշ խոսքով, պետք ե ընտրություն կատարենք: Այդ ընտրությունը հարկավոր ե շարունակել սերունդեսերունդ, լավից լավը ջոկելով, վորպեսզի վերջը կարողանանք ստանալ լավ հատկություններ ունեցող կենդանիներ. Յեթե ոացիոնալ կերպով կերպենք այդպիսի կենդանիներ, կզարդացնենք նրանց ունեցած լավագույն հատկությունները և կստանանք արդյունավետ—այսինքն, շատ կաթ կամ շատ միս տվող՝ կենդանիներ:

Պարզ ե, վոր կենդանիների ընտրությունն անասնապահության ամենակարենը և անհրաժեշտ աշխատանքն ե: Բայց վորպեսզի այդ աշխատանքը լավ արդյունքներ տա, հարկավոր ե, վոր դրանով զբաղվեն վոչ թե հատկանությունը, այլ ամբողջ գյուղացիությունը, այն ել կաղմակերպված ձեռվ, վորովհետեւ միայն այդ ձեռվ կարելի կլինի շատ կարճ ժամանակում մեր յերկրի տավարի ցեղն ազնվացնել: Իսկ յեթե ընտրության աշխատանքը տարպի անկազմակերպ և առանց ծրագրի, դրությունը կմնա նույնը և մեր տավարի ցեղը յերբեք չի ազնվանա:

Դրա համար ել հարկավոր ե, վոր հորթերի ընտրությունն ու նրանց գաստիարակությունը ոացիոնալ հիմքերի վրա գնելու գործին մասնակցի ամբողջ գյուղացիությունը, այն ել անպայման կաղմակերպված ձեռվ. վորովհետեւ վերջի վերջո մեր նպատակն ե ազնվացնել վոչ թե սրա նրա տավարը միայն, այլ ամբողջ յերկրի:

Տավարի կազմակերպված մասսայական ընտրությունը մի շարք յերկրներում տվել ե լավ արդյունքներ: Մի քանի տարում հաջողվել ե կովերի կաթնատվությունն ամբողջ յերկրում մեծ չափով բարձրացնել (Դանիա, Ֆինլանդիա և այլն): Փորձը ցույց ե տվել, վոր մեզ մոտ ել կարելի յե ստանալ նման արդյունքներ:

Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ ե մեզ մոտ ել կազմել ընկերություններ (խմբակներ), վորոնց նպատակը պետք ե լինի հորթերի ընտրությունն ու նրանց ուսցիոնալ կերակրումը: Այդ ընկերություններին անդամ կարող ե լինել ամեն մի տափարատեր, վորը համաձայն իր կաթնաւատ կովերի հորթերին մեծացնել ու կերակրել այն ձեռվ, ինչ ձե վոր ընդունված ե ընկերության կողմից: Ի հարկե, ընտրության, կերակրելու և խնամելու կարգը վորոշվում ե շրջանի գյուղատնտեսի ոգնությամբ և ամբողջ աշխատանքը տարվում ե նրա մոտիկ հսկողությամբ և ղեկավարությամբ: Այդ հորթաբուծական ընկերություններն զբաղվում են միայն տեղական տափարի աղնվացմամբ և վոչ թե ոտար ցեղերի: Հորթաբուծական ընկերությունների վարկային ընկերությունների միջոցով կարող են ուժեղ կերեր ձեռք բերել թե կովերի և թե հորթերի կերակրման համար:

Հորթաբուծական ընկերությունները կազմակերպում են հորթերի ցուցահանդեմներ և մրցումներ: Նրանք մասնակցում են նաև այն բոլոր ցուցահանդեմներին և մրցումներին, վոր կազմակերպում ե պետությունը: Այդ ընկերությունների լավագույն կովերը զբանցման են յենթարկվում և համարվում են առհմական: Մեծացրած ցուլերը ծախսվում են բեղմակայաններին կում պահվում են ընկերության կարիքների համար:

Հորթաբուծական ընկերությունները խոշոր ապագա ունեն մեզանում և հեշտությամբ կարող են դլուխ դար, միայն թե նախաձեռնողներ լինեն: Այդ խնդրում կարող

են մեծ դեր խաղալ մանավանդ կանայք, վորովհետեւ, ինչպես հայտնի յե, հորթերի խնամքը գտնվում է բացառապես կանանց ձեռքին:

Բացի հորթաբուծական ընկերություններից, նույն նպատակին կարելի յե հասնել նաև կոնյուն միությունների և մասնավանդ գյուղացիական կոլեկտիվ անասնաբուծարանների միջոցով:

Կոնտրոլ միությունները կովատերերի ընկերություններ են, վորոնք կովերի կերի և կաթի հաշվառման միջոցով իմանում են, թե վոր կովը ե ամենաքիչ կերից ամենաշատ կաթը տալիս: Այդպիսի կովերին և նրանց հորթերին պահում են ու մեծացնում, մյուսներին՝ ընկերությունից հանում: Ժամանակի ընթացքում կոնտրոլ միության մեջ առաջ են գալիս միայն լավագույն կովեր, վորոնց հորթերին հետ են զցում պահելու և խնամելու համար: Այդ ձեռվ մի քանի տարում հնարավոր ե լինում տեղական տափարից ստանալ արդյունավետ կենդանիներ:

Կոլեկտիվ անսսնաբուծարանները նույնպես ընկերություններ են, վորոնց զիմավոր նպատակն ե տեղական տափարի աղնվացումը: այսինքն՝ ձգտում են ստանալ նըրանից արդյունավետ և իր հատկությունները ժառանգից ժառանգ անցկացնող ցեղ: Ի հարկե, զուգընթացաբար կատարվում ե նաև կերի և կաթի հաշվառումն: Այս ընկերությունների հիմնական հոգսերից ամենազլիքավորը կովերի և մտադր սերնդի ընտրությունն ու նպատակահարմար գաստիարակումն ե: Կազմակերպուվ այդպիսի ընկերություններ մենք հնարավորություն կունենանք մասսայորեն աղնվացնել մեր տեղական տափարը:

Այդ ընկերությունների կազմակերպման նախաձեռնությունը պետք ե լինեն գյուղակցիաները, կաթնարատել ները, դպրոցները, գյուղամբակները և ընդհանրապես մեր գյուղական ակտիվը գյուղատնտեսների մոտիկ աջակցությամբ:

Խնդիրներ յեվ առաջադրություններ

- Կազմակերպեցեք ձեր գյուղում հորթարուծական խմբակներ կամ կոլեկտիվներ, ներդրավիլով դրանց մեջ ձեր գյուղի բոլոր հորթատերերին:
- Յուցա՛տերեցեք ձեր գյուղի կաթնառատ կովերին և դրանց հորթերի համար հայտարարեցեք սացիոնալ կերակրման մրցում:
- Ձեր խմբակի անդամների ամենակաթնառատ կովի վորձ հորթին ընտրեցեք իրենց ցուլացու խմբակի կովերի համար և առանձնապես հոկեցեք նրա կերակրման և խնամքի վրա: (Կարիք յեղած դեպքում խմբակը կարող է իր վրա վերցնել ծախսի մի մասը):
- Խմբակների կամ կոլեկտիվների կովերի համար ընտրեցեք տեղական ցեղի այնպիսի ցուլ վորի մայրը կաթնառատ և յեղել լավ ե, յեթե հայրն եւ մայրն ել իրենց հորթին դարձյալ կաթնառատ ծովոների զավակներ են:
- Խմբակների և կոլեկտիվների կովերի մեջ կաթնառատվության մրցում հայտարարեցեք, իմանալու համար թե վոր կովերն են ամենակաթնառատները, վորպեսզի նրանց սերունդի վրա հատուկ հոկողություն ունինաք:
- Կազմեցեք նախագիծ՝ ամրող գյուղի հորթապահությունը ռացիոնալիզացիայի յնթարկելու մասին: Այդ նախագիծը գըրեք ձեր խմբակի և գյուղական ժողովի քննության և իրականացրեք նախագծված ձեռնարկումները:

12. ՀՈՐԹԵՐԻ ՄԵԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՀՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի հիվանդության առաջն առնելն ավելի հեշտ է, քան թե բժշկելը: Բացի այդ՝ բժշկելիս ել հարկավոր է ամենից առաջ հիվանդության պատճառը վերացնել, թե չե բժշկելը վոչ մի ոգուտ չի տալ:

Բժշկելու մի քանի պարզ ու հասարակ ձեռք ցույց կտանք, վոր կարող եք գործ ածել այն ժամանակ, յերբ վոչ անասնաբուժ կարելի յե ճարել, վոչ բուժակ:

1. ՍՊԻՏԱԿ ՓՈՐԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ (ՓՈՐԼՈՒԾ)

Այս փորգնացությունը վարակիչ (մեկից մյուսին փոխվող) հիվանդություն է:

Սպիտակ վարակիչ փորգնացությունը (փորլուծը) սովորաբար պատահում է նորթին հորթի առաջին յերեք որը: Այդ փորլուծը սովորականից նրանով ե զանազան վում, վոր թրիքն սպիտակավուն-դեղին գույն ունի: Սպիտակ փորգնացությամբ հորթերը հիվանդանում են հենց ծնվելիս, պորտի միջոցով: Այդ փորգնացությունը շատ դժվար ե բժշկվում: Այդ հիվանդության առաջն առնելու համար խորհուրդ են տալիս հորթը ծնվելուց կարբույան թթվուտի ջրով պորտն իսկույն լվանալ:

Պրոֆեսոր Լ. Շտեյները և անսանաբուժ Յ. Շնելն առաջարկում են այս հիվանդության դեպքում հորթի քաժին կաթը կիսով չափ պակսացնել կամ տալ միայն $\frac{1}{3}$ մասը: Ապա հարկավոր ե տաք ջրում 3—4 հացի գըրդալ գենագերչազի ձեթ տալ, վոր փորը լուծի, իսկ հետո որը յերկու անգամ—առավոտյան ու յերեկոյան—մի բաժակ կարի մեջ մի-մի զդալ տանօնքորմի փոչի տալ: Միաժամանակ պետք ե նաև առողջ հորթերին որական շթելի գդալ տաննոփորմ տալ, վոր նրանք ել չհիվանդանան:

Գործադրում են նաև ուրիշ միջոց. լուծողականից հետո որական յերեք անգամ հորթին տալիս են՝ ամեն անգամ կես թեյի գդալ՝ դառնիճ (տաննին) և սալիցիլյան թթվուտ: Բացի դրանից, առողջ հորթերին իսկույն տեղափոխում են ուրիշ տեղ, վոր նրանք ել չվարակվեն ու հիվանդանան: Աղբը հորթատնից գուրս են տանում, պատերն ու հատակը լավ կիր են քսում:

Դանիայում ու Սաքսոնիայում սպիտակ փորգնացության առաջն առնելու համար հորթերին պատվաստում են ծաղկի նման, վորը լավ ե ոգնում: Բայց պատվաստումը պետք ե անասնաբուժն անի:

2. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԳՆԱԳՈՒԹՅՈՒՆ

Սովորական փորգնացության պատճառներն են լինում. 1) հորթին շատ կեր տալը, 2) դալի (խիժնի) տեղսկզբում հին ծնած կովի կաթ տալը, 3) հնացած ու կեղտոտ կաթ տալը, 4) սառը կաթ կամ սառը ջուր տալը, 5) ամանի կեղտոտ լինելը, 6) ժամանակից առաջ յերեսը քաշած կաթ և ուրիշ կեր տալը, 7) միանգամից կերի տեսակը փոխելը, 8) կեղտոտ և ցուրտ բնակարանը և ուրիշ պատճառներ:

Ամենից առաջ հարկավոր ե փորգնացությամբ հիշվանդ հորթին տանել մի տաք ու մաքուր տեղ, յեթե նացուրտ ու կեղտոտ գոմում ե: Որական տրվող կաթի $\frac{1}{3}$ կամ մինչև անգամ $\frac{1}{2}$ մասը հարկավոր ե կտրել: Յեթե կաթնակեր հորթին խոտ կամ ուրիշ կեր ել են տալիս, ապա լավ ե մի ժամանակ այլես չտալ, այլ կերակրել սիայն թարմ (նոր կթած) ու մաքուր անարատ կաթով: Այսպես են բժշկում. հորթի փորը արորում են ծղնոտի կեմով, հետո տալիս են որը յերկու անգամ կտավիատի յեփած սերմի բունդ խառն: Բացի այդ, անասնաբուժ Ա. Իվանովը խորհուրդ ե տալիս տալ $\frac{1}{2}$ գդալ տաննին ու $\frac{1}{2}$ գդալ սալիցիյան թթվուտ կամ որը յերկու անգամ մի մի թեյի գդալ սալով (զեղատնից կարելի յե առնել):

Այն հորթին, վորն արգեն ջրալյուր ե ստանում, փորգնացության ժամանակ տալիս են մաքուր ջուր ու բոված, աղած վարսակ, որական $\frac{1}{2}$ գրվանքա, նույնպես և կտավիատի սերմի յեփած ջուր:

Խորհուրդ են տալիս նաև փորգնացություն ունեցող հորթերին կերի հետ սողա ու մաքրած կավիճ տալ՝ ամեն անգամ ամեն մեկից մի թեյի գդալ, որական յերեք անգամ:

* Լավ ե ոգնում նույնպիս կրեոզոտը, փորից 6—8 կաթից ածում են կաթի մեջ, լավ խառնում ու տալիս հորթին:

3. ՓՈՐԿԱՊՈՒԹՅՈՒՆ

Ինչպես փորգնացության, այնպես ել փորկապության ժամանակ պետք ե հիվանդ հորթի կերը պակասացնել ու լավ հետեւ ամեն բանի մաքրության:

Առավոտ ու յերեկո հորթին ամեն անգամ $\frac{1}{2}$ բաժակ կտավիատի կամ քունջութի ձեթ պետք ե խմացնել: Զեթի տեղ կարելի յե տալ կտավիատի յեփած սերմի թունդ ջուր կամ 2—3 հացի գդալ դլառւբերի աղ: Աղը պետք ե լուծել յեռացող ջրում: Բացի դրանից, շատ ոգտակար ե հոգնա (կլիզմա) անել, այսինքն՝ մի ջրամանի վրա պնդացրած խողովակի միջով ուղիղ աղիքի մեջ են ածում քունջութի կամ կտավիատի ձեթով կամ կտավիատի յեփած սերմի ջրով խառը տաք ջուր: Այդ պատրաստելու համար առաջ 2 շիշ տաք ջրի մեջ լուծում են յերկու թեյի գդալ սողա, հետո այդ լուծվածքը շարունակ խառնելով՝ քիք-քիչ մեջն են ածում ձեթը: Հոգնան հարկավոր ե անել և փորլուծության ժամանակ: Փորկապության դեպքում շատ ոգտակար ե հորթի փորը արորեկը և հորթին գես գեն քշելը:

4. ՓՈՐՈՒՄ Ը ՈՒՅ

Հորթի փորն ուռչում ե սովորաբար փշացած կաթից ու կերից, ինչպես և շատ ուտելուց: Ամենից առաջ աշխատում են գուրս բերել փորում հավաքված գազերը. դրա համար կիսով չափ ջուր խառնուծ սկիպիդարով փորը թունդ արորում են կամ թե չե հորթին վազեցնում են, հետո լեզուն գուրս են քաշում ու մի թեյի գդալ աղաթթու յեն խմացնում: Բացի դրանից, հոգնա ել են անում, ինչպես փորկապության ժամանակ, մի գդալ ջարդած կավիճ ջրում բաց անում և խմացնում հորթին:

5. ԴՆՁԻՆ ԲՇՏԻԿՆԵՐ ԴՈՒՐՍ ՏԱԼԸ

Այս հիվանդության ժամանակ հորթի շրթունքները (պոռշները) ու դունչը կասես թեփով քսած լինեն. առաջ սպիտակ բշտիկներ են դուրս դալիս, վորոնք հետո պատռվում են ու չորանում:

Այս հիվանդությունը բժշկելու համար հորթի դունչը լվանում են տաք ջրով ու սապնով, հետո որը յերեք անգամ քսում են ջրի մեջ լուծած Յ տոկոսային կարբույան թթվուտ ($\frac{1}{2}$ թեյի գդալ մի շեշ ջրին):

6. Վ Ո Զ Ի Լ Ն Ե Ր

Կեղտոտ պահվող ու վատ կերակրվող հորթերի վրա վոշիլներ են դոյանում: Նրանցից ազատվելու համար հարկավոր ե դեռ ամենից առաջ հորթին տաք ջրով ու կանաչ սապնով լվանալ աղբը մաքրել ու ցամքարը փռել, կերը լավացնել իսկ հետո սկսել բժշկել:

Հորթերին վոշիլներից փրկում են՝ նրա կաշին թըրթելով յեփած ծխախոտի (թամբաքուի) ջրով: Շմուլեվիչի ասելով՝ յեփած ծխախոտի ջուրն այսպես են պատրաստում. — 1 գրվանքա ծխախոտ են ածում 6 գրվանքա ջրի մեջ ու կես ժամ յեփում, հետո ծխախոտի տերեները դուրս են տալիս ու ջրին յերկու շեշ ջուր ել ավելացնում: Միանգամից ըոլոր կաշին չեն թրջում ծխախոտի ջրով, այլ մաս-մաս, որական նրա մարմինի $\frac{1}{3}$ մասը:

Այդպիսով, հորթի կաշին այնքան ժամանակ են թըրթում, մինչև վոր վոշիլները վերջանում են:

Առաջ սկսում են թրջել կաշվի այն մասը, վորտեղ ավելի շատ վոշիլ կա, իսկ հետո այն տեղերը, վորտեղ ավելի քիչ կա, կամ բալորովին չկա:

Ծխախոտի տեղ կարելի յե գործ ածել $\frac{1}{2}$ -տոկոսանոց կրեոլին:

Կարելի յե և խառնել մեկ մաս սպիտակ նավթ 4 մաս ձեթի հետ և քսել վոջլոտ տեղերը, կրկնելով 4 ուրից հետո:

Հորթի կաշվի վրա, մանավանդ փորի տակը, շեքում, շատ անգամ տիգեր են պատահում: Այդ տիգերը շատ վասակար են, նրանց հարկավոր ե պոկել, վոչնչացնել:

Ցեթե ամեն որ հորթի ամբողջ մարմինը, կաշին խոզանակով (չոտակով) մաքրվի, հորթը վոչ կոջլոտի, վոչ ել տիգեր կունենա վրան:

Դժվար հիվանդությունների ժամանակ հարկավոր ե դիմել անամարտուժին:

ԽԵՂԻՐԵՆԵՐ ՅԵՎ ԱՊԱՋԱՊՐՈՒՅՈՒՅՆԵՐ

1. Այս զլիսում բերած հիվանդություններից վճրոնք են ավելի հաճախ պատահում ձեր գյուղում:
2. Նկարագրեցեք ձեր հորթի հիվանդության նշանները և համեմատեցեք այս զլիսում բերած համապատասխան հիվանդության հետ:
3. Այստեղ առաջարկված միջոցները կիրառել եք հորթերի համապատասխան հիվանդության դեպքում և ինչ արդյունք են տվել:
4. Չհոք բերեք այս զլիսում առաջարկված բժշկական ամենաանհրաժեշտ միջոցները, վորպեսզի խմբակի յուրաքանչյուր անդամ կարիք յեղած դեպքում կարողանա ողտվել:
5. Ցերեք չմոռանաք, վոր հորթին առողջապահում պահելու ամենալավ միջոցը՝ նրան սացիոնալ ձեռվ պահելն ե և ուրեմն հիվանդությունների առաջն առնելն:



Ց Ա Ն Կ

	Ցերեա
1. Հորթը մոր արդանդում	7
2. Ինչպէս և լինչ պետք ե անել, վոր կթվող ծանրած կովը ժամանակին ցամաքի	10
3. Հորթի ծնունդը և առաջին խնամքը	13
4. Ի՞նչպիս կաթ տալ հորթին՝ ծծեցնելով թե ամանից խմացնելով	21
5. Ի՞նչպիս անել, վոր կովը կթվի առանց հորթի	25
6. Հորթերի կերակրումը	27
ա. Կերակրելու հիմունքները, ի՞նչպիս և կերակ- րում գյուղացին, և ի՞նչպիս պետք ե կերակրել .	27
բ. Հորթերի կերակրման կանոնները կաթ տալու շրջանի համար	40
գ. Կաթի նորմաները	45
դ. Ինչպիս պետք ե կերակրել հորթերին կաթից կտրելուց հետո	50
7. Հորթի հետազա ինամքի գլխավոր կետերը	53
8. Արոտը: Սար գնալը: Հորթարածների վորակը	60
9. Ծնելու ժամանակի կանոնավորումը	66
10. Գոմ և հորթանոց: Կոռպերատիվ գոմերի կառուցման անհրաժեշտությունը	70
11. Հորթերի ընտրության և ռացիոնալ ինամքի մասսա- յականացումը	76
12. Հորթերի մեջ հաճախ պատահող հիվանդությունների բժշկությունը	80

ՀՀ Ազգային գրադարան



NL0282932

21.663

ԳԻՆԸ 50 ԿՈՄ.